ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«25» դեկտեմբերի 2023 **թվականի** N 3269-Ա

ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ ՍՈՒՔԻԱՍ ԱՇՈՏԻ ԱԼԹՈՒՆՅԱՆԻՆ (1/3 ՄԱՍ), ԼԻԼՅԱ ԱՐԱՄԻ ԱԼԹՈՒՆՅԱՆԻՆ (1/3 ՄԱՍ) ԵՎ ԷԴԻԿ ԱՇՈՏԻ ԱԼԹՈՒՆՅԱՆԻՆ (1/3 ՄԱՍ) ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՄԱԶՄԱՆՅԱՆ ՓՈՂՈՑԻ N 336 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՕՐԻՆԱԿԱՆ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ 219.79 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԿԻՑ ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ 119.96 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ

Քաղաքացիներ Սուքիաս Աշոտի Ալթունյանին (1/3 մաս), Լիլյա Արամի Ալթունյանին (1/3 մաս) և Էդիկ Աշոտի Ալթունյանին (1/3 մաս) ժառանգության իրավունքով պատկանող (հիմք՝ ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիր, տրված 2023 թվականի մայիսի 12-ին N 5865, 5866, 5867) Գյումրի քաղաքի Մազմանյան փողոցի N 336 հասցեի բնակելի տան օրինական հողամասում մինչև 2001 թվականի մայիսի 15-ը ինքնակամ կառուցված է 219.79 (երկու հարյուր տասնինն ամբողջ յոթանասունինը հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի շինություններ և օրինական հողամասին կից ավել օգտագործվում է 119.96 (մեկ հարյուր տասնինն ամբողջ իննսունվեց հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով սահմանազատված հողամաս, որի վրա առկա շինությունները կառուցված են մինչև 2001 թվականի մայիսի 15-ը, որոնք հաշվառված են Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեում N 2023XPKS2X, N 2023SRMMY4 և N 2023YAD2TX ծածկագրերով:

Քաղաքացի Լիլյա Արամի Ալթունյանը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին նշված հողամասի և շինությունների նկատմամբ իրենց սեփականության իրավունքը ճանաչելու խնդրանքով:

Նկատի ունենալով վերոգրյալը, հաշվի առնելով, որ շինությունները չեն գտնվում հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ղեկավարվելով «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» օրենքի 2-րդ հոդվածով, 3-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 22.1-րդ կետի և հիմք ընդունելով քաղաքացի Լիլյա Արամի Ալթունյանի դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 2023 թվականի սեպտեմբերի 01-ին N 18433 թվագրմամբ)՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Ճանաչել քաղաքացիներ Սուքիաս Աշոտի Ալթունյանի (1/3 մաս) (ծնված 1968 թվականի հունվարի 24-ին), Լիլյա Արամի Ալթունյանի (1/3 մաս) (ծնված 1946 թվականի մայիսի 14-ին) և Էդիկ Աշոտի Ալթունյանի (1/3 մաս) (ծնված 1965 թվականի դեկտեմբերի 27-ին) սեփականության իրավունքը՝ ժառանգության իրավունքով իրենց պատկանող՝ Գյումրի քաղաքի Մազմանյան փողոցի N 336 հասցեի բնակելի տան օրինական հողամասին կից, ավել օգտագործվող 119.96 (մեկ հարյուր տասնինն ամբողջ իննսունվեց հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով սահմանազատված հողամասի և նրա վրա առկա շինությունների նկատմամբ:
2. Քաղաքացիներ Սուքիաս Աշոտի Ալթունյանին (1/3 մաս), Լիլյա Արամի Ալթունյանին (1/3 մաս) և Էդիկ Աշոտի Ալթունյանին (1/3 մաս) ժառանգության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Մազմանյան փողոցի N 336 հասցեի բնակելի տան օրինական հողամասում ինքնակամ կառուցված 219.79 (երկու հարյուր տասնինն ամբողջ յոթանասունինը հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի շինությունները ճանաչել օրինական:

3. Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացիներ Սուքիաս Աշոտի Ալթունյանին, Լիլյա Արամի Ալթունյանին և Էդիկ Աշոտի Ալթունյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

25.12.2023

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ**

2023թ. ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«25» դեկտեմբերի 2023 թվականի N 3268 Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 01-Ի N 1918-Ա ԵՎ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 16-Ի N 2877-Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով, հաշվի առնելով քաղաքացի Արմեն Խոցանյանի՝ դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 2023 թվականի դեկտեմբերի 20-ին N 27417 թվագրմամբ)՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2023 թվականի օգստոսի 01-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի գյումրի համայնքի ղեկավարի 2023 թվականի հուլիսի 27-ի N 1876-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին>> N 1918-Ա և 2023 թվականի նոյեմբերի 16-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2023 թվականի հուլիսի 27-ի N 1876-Ա որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին>> N 2877-Ա որոշումները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

ք.Գյումրի
2023 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«25» դեկտեմբերի 2023 **թվականի** N 3267-Ա

ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ ԱՎԵՏԻՍ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻՆ (3/4 ՄԱՍ) ԵՎ ԳՈՒՐԳԵՆ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻՆ (1/4 ՄԱՍ) ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԱՎԶՆՈՑ ՓՈՂՈՑԻ N 65 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՕՐԻՆԱԿԱՆ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ 123.4 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԿԻՑ ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ 296.93 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ

Քաղաքացիներ Ավետիս Հովհաննեսի Թադևոսյանին (3/4 մաս) և Գուրգեն Հովհաննեսի Թադևոսյանին (1/4 մաս) ժառանգության իրավունքով պատկանող (հիմք՝ բնակելի տան տեխնիկական անձնագիր N 1553ա, ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիր, տրված 2023 թվականի սեպտեմբերի 08-ին N 6120) Գյումրի քաղաքի Ավզնոց փողոցի N 65 հասցեի բնակելի տան օրինական հողամասում մինչև 2001 թվականի մայիսի 15-ը ինքնակամ կառուցված է 123.4 (մեկ հարյուր քսաներեք ամբողջ չորս տասնորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի շինություն և օրինական հողամասին կից ավել օգտագործվում է 296.93 (երկու հարյուր իննսունվեց ամբողջ իննսուներեք հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով սահմանազատված հողամաս, որի վրա առկա շինությունները կառուցված են մինչև 2001 թվականի մայիսի 15-ը, որոնք հաշվառված են Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեում N 2023SW5VKB և N 20233UFLQZ ծածկագրերով:

Քաղաքացի Գուրգեն Հովհաննեսի Թադևոսյանի կողմից լիրազորված անձ Արմեն Խոցանյանը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին նշված հողամասի և շինությունների նկատմամբ Ավետիս Հովհաննեսի Թադևոսյանի և Գուրգեն Հովհաննեսի Թադևոսյանի սեփականության իրավունքը ճանաչելու խնդրանքով:

Նկատի ունենալով վերոգրյալը, հաշվի առնելով, որ շինությունները չեն գտնվում հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ղեկավարվելով «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» օրենքի 2-րդ հոդվածով, 3-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 22.1-րդ կետի և հիմք ընդունելով քաղաքացի Գուրգեն Հովհաննեսի Թադևոսյանի կողմից լիրազորված անձ Արմեն Խոցանյանի դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 2023 թվականի հոկտեմբերի 02-ին N 20795 թվագրմամբ)՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Ճանաչել քաղաքացիներ Ավետիս Հովհաննեսի Թադևոսյանի (3/4 մաս) (ծնված 1957 թվականի հունվարի 28-ին) և Գուրգեն Հովհաննեսի Թադևոսյանի (1/4 մաս) (ծնված 1959 թվականի նոյեմբերի 03-ին) սեփականության իրավունքը՝ ժառանգության իրավունքով իրենց պատկանող՝ Գյումրի քաղաքի Ավզնոց փողոցի N 65 հասցեի բնակելի տան օրինական հողամասին կից, ավել օգտագործվող 296.93 (երկու հարյուր իննսունվեց ամբողջ իննսուներեք հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով սահմանազատված հողամասի և նրա վրա առկա շինությունների նկատմամբ:
2. Քաղաքացիներ Ավետիս Հովհաննեսի Թադևոսյանին (3/4 մաս) և Գուրգեն Հովհաննեսի Թադևոսյանին (1/4 մաս) ժառանգության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Ավզնոց փողոցի N 65 հասցեի բնակելի տան օրինական հողամասում ինքնակամ կառուցված 123.4 (մեկ հարյուր քսաներեք ամբողջ չորս տասնորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի շինությունը ճանաչել օրինական:

3. Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացիներ Ավետիս Հովհաննեսի Թադևոսյանին և Գուրգեն Հովհաննեսի Թադևոսյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

25.12.2023

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ**

2023թ. ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«25» դեկտեմբերի 2023 թվականի N3266-Ա

2019 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 5-ԻՆ ՏՐՎԱԾ N52/19 ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՄԲ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՏԵՎՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Կառուցապատող Միշա Ալեքսանյանին Գյումրի քաղաքի Գործարանային փող. №8/13 հասցեում սպասարկման օբյեկտի կառուցման համար 2019 թվականի սեպտեմբերի 5-ին տրվել է N52/19 շինարարության թույլտվությունը:

Սահմանված ժամկետում շինարարական աշխատանքները չեն ավարտվել, և կառուցապատողը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին շինարարության թույլտվությամբ սահմանված շինարարության տևողությունը երկարաձգելու 17/տասնյոթ/ ամսով:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Քաղաքաշինության մասին» օրենքի 23-րդ հոդվածով, հիմք ընդունելով կառուցապատողի դիմումը և Գյումրու համայնքապետարանի կողմից ընդունված վարչական վարույթի արձանագրությունը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. 2019 թվականի սեպտեմբերի 5-ին տրված N52/19 շինարարության թույլտվությամբ սահմանված շինարարության տևողության ժամկետը երկարաձգել 17/տասնյոթ/ ամսով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացուն պատշաճ կարգով իրազեկման օրվան հաջորդող օրվանից:

25.12.2023

Ղեկավար՝ Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

2023թ. ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«25» դեկտեմբերի 2023 թվականի N 3265-Ա

2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 10-ԻՆ ՏՐՎԱԾ N190/23 ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՄԲ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՏԵՎՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հովհաննես և Մարիամ Մեխակի Գրիգորյաններին Գյումրի քաղաքի Անի թաղամաս 5-րդ փողոց №10ա շենք №1 հասցեով բնակարանին կից պատշգամբի վերակառուցման համար 2023 թվականի հոկտեմբերի 10-ին տրվել է N190/23 շինարարության թույլտվությունը:

Շինարարական աշխատանքներն ավարտվել են սահմանված ժամկետում:

Կառուցապատողը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին շինարարության թույլտվությամբ սահմանված շինարարության տևողությունը երկարաձգելու՝ ավարտական ակտի տրամադրման նպատակով ավարտված շինարարական օբյեկտն ընդունող հանձնաժողովի աշխատանքները ավարտելու համար:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, հիմք ընդունելով կառուցապատողի դիմումը և Գյումրու համայնքապետարանի կողմից ընդունված վարչական վարույթի արձանագրությունը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. 2023 թվականի հոկտեմբերի 10-ին տրված N190/23 շինարարության թույլտվությամբ սահմանված շինարարության տևողության ժամկետը երկարաձգել մինչև ավարտված շինարարական օբյեկտն ընդունող հանձնաժողովի աշխատանքների ավարտը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացուն պատշաճ կարգով իրազեկման օրվան հաջորդող օրվանից:

Недействительная подпись

X

2023թ. Գյումրի

Ա. ՍԱՐԳՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-03; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«25» դեկտեմբերի 2023 թվականի N 3264 -Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ ԿԱՐԵՆ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ԲԱԴԱԼՅԱՆԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Աշխատանքային օրենսգրքի 159-րդ հոդվածի 1-ին մասով, 163-րդ հոդվածով և հիմք ընդունելով Կարեն Հովհաննեսի Բադալյանի 2023 թվականի դեկտեմբերի 25-ի դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Կարեն Հովհաննեսի Բադալյանին տրամադրել 2022 թվականի աշխատանքային տարվա ամենամյա նվազագույն արձակուրդի մասը՝ 2024 թվականի հունվարի 3-ից:

2.Ամենամյա նվազագույն արձակուրդի մասը՝ 7 աշխատանքային օր՝ 2024 թվականի հունվարի 3-ից 11-ը ներառյալ:

3.Ամենամյա նվազագույն արձակուրդի ընթացքում Կարեն Հովհաննեսի Բադալյանի ծառայողական պարտականությունների կատարումը վերապահել քարտուղարության բաժնի պետ Աննա Հրաչիկի Մեքինյանին:

4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Կարեն Հովհաննեսի Բադալյանին և Աննա Հրաչիկի Մեքինյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

25.12.2023

Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«25» դեկտեմբերի 2023 **թվականի** N3263-Ա

2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 18-ԻՆ ՏՐՎԱԾ N35/21 ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՄԲ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՏԵՎՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Կառուցապատող ՀՀ Շիրակի մարզի Գյումրի համայնքի «Զանգակ» ՀՈԱԿ-ին և Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամին Գյումրի քաղաքի Շահումյան փողոց №214/12 հասցեում մանկապարտեզի կառուցման համար 2021 թվականի հունիսի 18-ին տրվել է N35/21 շինարարության թույլտվությունը:

Սահմանված ժամկետում շինարարական աշխատանքները չեն ավարտվել, և կառուցապատողը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին շինարարության թույլտվությամբ սահմանված շինարարության տևողությունը երկարաձգելու 80/ութսուն/ օրով:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Քաղաքաշինության մասին» օրենքի 23-րդ հոդվածով, հիմք ընդունելով կառուցապատողի դիմումը և Գյումրու համայնքապետարանի կողմից ընդունված վարչական վարույթի արձանագրությունը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. 2021 թվականի հունիսի 18-ին տրված N35/21 շինարարության թույլտվությամբ սահմանված շինարարության տևողության ժամկետը երկարաձգել 80/ութսուն/ օրով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացուն պատշաճ կարգով իրազեկման օրվան հաջորդող օրվանից:

25.12.2023

2023թ. ք.Գյումրի Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«25» դեկտեմբերի 2023 **թվականի** N 3262Ա

2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 28-ԻՆ ՏՐՎԱԾ N36/22 ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՄԲ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՏԵՎՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Կառուցապատող Հայկուշ Արամայիսի Սողոյանին Գյումրի քաղաքի Շիրազի փողոց №21/1 հասցեում անհատական բնակելի տան կառուցման համար 2022 թվականի հունիսի 28-ին տրվել է N36/22 շինարարության թույլտվությունը:

Սահմանված ժամկետում շինարարական աշխատանքները չեն ավարտվել, և կառուցապատողը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին շինարարության թույլտվությամբ սահմանված շինարարության տևողությունը երկարաձգելու 12/տասներկու/ ամսով:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Քաղաքաշինության մասին» օրենքի 23-րդ հոդվածով, հիմք ընդունելով կառուցապատողի դիմումը և Գյումրու համայնքապետարանի կողմից ընդունված վարչական վարույթի արձանագրությունը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. 2022 թվականի հունիսի 28-ին տրված N36/22 շինարարության թույլտվությամբ սահմանված շինարարության տևողության ժամկետը երկարաձգել 12/տասներկու/ ամսով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացուն պատշաճ կարգով իրազեկման օրվան հաջորդող օրվանից:

25.12.2023

2023թ. ք.Գյումրի

Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«25» դեկտեմբերի 2023 **թվականի** N 3261-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԲՈՒԼՎԱՐԱՅԻՆ 1-ԻՆ ՓԱԿՈՒՂԻ ԹԻՎ 7/1 ՀԱՍՑԵԻ ՃԱՇԱՐԱՆԻ ԳՈՐԾԱՌԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գյումրի քաղաքի Բուլվարային 1-ին փակուղի թիվ 7/1 հասցեի ճաշարանը սեփականության իրավունքով պատկանում է քաղաքացի Մարինե Հարությունի Պետրոսյանին (հիմք՝ Շիրակի մարզի առաջին ատյանի դատարանի 31.07.2007 թվականի վճիռ,գործ թիվ 2-2717):

Քաղաքացի Մարինե Հարությունի Պետրոսյանը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին սեփականության իրավունքով իրեն պատկանող Գյումրի քաղաքի Բուլվարային 1-ին փակուղի թիվ 7/1 հասցեի 382,0 (երեք հարյուր ութսուներկու) քառակուսի մետր մակերեսով ճաշարանի գործառական նշանակությունը, որպես բնակելի տուն փոփոխելու խնդրանքով:

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 23-րդ հոդվածի 6-րդ մասով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2002թ. փետրվարի 2-ի թիվ 88 որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետությունում շենքերի, շինությունների կամ դրանց մի հատվածի գործառական նշանակությունը փոփոխելու կարգի», նկատի ունենալով Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի կոմիտեի 2023 թվականի նոյեմբերի 17-ի «Գույքի նկատմամբ իրավունքի (սահմանափակման) պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին» ՆԿ-17112023-08-0225 որոշումը և հիմք ընդունելով քաղաքացի Մարինե Հարությունի Պետրոսյանի դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 2023 թվականի նոյեմբերի 30-ին N 25811 թվագրմամբ).

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Փոփոխել Գյումրի քաղաքի Բուլվարային 1-ին փակուղի թիվ 7/1 հասցեի 382,0 (երեք հարյուր ութսուներկու) քառակուսի մետր մակերեսով ճաշարանի գործառական նշանակությունը, որպես բնակելի տուն:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում իրավական ակտի ընդունման մասին Մարինե Հարությունի Պետրոսյանին պատշաճ կարգով իրազեկման օրվան հաջորդող օրվանից:
3. Գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

25.12.2023

ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ**

2023թ. ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«25» դեկտեմբերի 2023 **թվականի** N3260Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՇԻՐԱԶԻ ՓՈՂՈՑ № 42/2 ՀԱՍՑԵԻ 27.0 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Շիրազի փողոց № 44/1 հասցեի 72.0 (յոթանասուներկու ամբողջ) քառակուսի մետր մակերեսով հողամասը և շինությունը սեփականության իրավունքով պատկանում է քաղաքացիներ Արշակ Արթուրի Թովմասյանին և Հրանուշ Սամվելի Թովմասյանին (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման № 23052023-08-0018 վկայական):

Քաղաքացի Արշակ Արթուրի Թովմասյանը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքին սեփականության իրավունքով պատկանող (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման № 24112023-08-0016 վկայական) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Շիրազի փողոցի N 42/2 հասցեի 27.0 (քսանյոթ ամբողջ) քառակուսի մետր մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասն ուղղակի վաճառքի միջոցով իրեն օտարելու խնդրանքով:

Նկատի ունենալով վերոգրյալը, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մայիսի 26-ի N 550-Ն որոշման 1-ին կետի 3-րդ, 4-րդ, 5-րդ և 6-րդ ենթակետերի դրույթների, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, հողային օրենսգրքի 63-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, 66-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 13-ի N 270-Ա և քաղաքացի Արշակ Արթուրի Թովմասյանի դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 2023 թվականի մայիսի 23-ին N 9799 թվագրմամբ)՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Քաղաքացիներ Արշակ Արթուրի Թովմասյանին և Հրանուշ Սամվելի Թովմասյանին ուղղակի վաճառքի միջոցով օտարել սեփականության իրավունքով իրենց պատկանող Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Շիրազի փողոց № 44/1 հասցեի 72.0 (յոթանասուներկու ամբողջ) քառակուսի մետր մակերեսով հողամասին հարակից Շիրազի փողոց N 42/2 հասցեի Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքին սեփականության իրավունքով պատկանող (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման № 24112023-08-0016 վկայական), կառուցապատումից ազատ, բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման գործառնական նշանակության 27.0 (քսանյոթ ամբողջ) քառակուսի մետր մակերեսով հողամասը՝ շինությունը ընդլայնելու նպատակով:
2. Օտարվող հողամասի ուղղակի վաճառքի գին սահմանել տվյալ հողամասի կադաստրային արժեքով, որը հողամասի օտարման պահին կազմում է 24889 (քսանչորս հազար ութ հարյուր ութանասունինը) Հայաստանի Հանրապետության դրամ՝ 1.0 (մեկ) քառակուսի մետրի դիմաց, ընդամենը՝ 672003 (վեց հարյուր յոթանասուներկու հազար երեք) Հայաստանի Հանրապետության դրամ:

3. Սահմանված կարգով կնքել հողամասի առքուվաճառքի պայմանագիր (պատասխանատու քաղաքաշինության և ճարտարապետության բաժին):
4. Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման և պայմանագրի նոտարական վավերացման ծախսերը կատարել քաղաքացիներ Արշակ Արթուրի Թովմասյանի և Հրանուշ Սամվելի Թովմասյանի միջոցների հաշվին:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի քաղաքացիներ Արշակ Արթուրի Թովմասյանին և Հրանուշ Սամվելի Թովմասյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

25.12.2023

Հ Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2023թ. ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«25» դեկտեմբերի 2023 թվականի N 3259-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՆՍՏԵՓԱՆՅԱՆ ՓՈՂՈՑ 1-ԻՆ ՓԱԿՈՒՂԻ N 8 ՀԱՍՑԵԻ 263,35 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ԱՐՏԱՆՔԻՆ ՄԱԿԵՐԵՍՈՎ, 222,44 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ 797,22 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ՔԱՂԱՔԱՑԻ ԱՐԹՈՒՐ ՊԱՏՎԱԿԱՆԻ ՆԱԶԱՐՅԱՆԻՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գյումրի քաղաքի ՆՍտեփանյան փողոց 1-ին փակուղի N8 հասցեի 797՝22(յոթ հարյուր իննսունյոթ ամբողջ քսաներկու հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասով բնակելին հանդիսանում է համայնքային սեփականություն (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N10112023-08-0051վկայական):

Նկատի ունենալով, որ նշված շինությունը չի գտնվում Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողերի վրա, ղեկավարվելով <<Անշարժ գույքի հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին>> օրենքով, համաձայն Հայաստանի Հանրապետության Կառավարության կողմից 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ բաժնի, ղեկավարվելով , <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով հիմք ընդունելով Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2023 դեկտեմբերի 13-ի N266-Ա որոշումը և քաղաքացի Արթուր Պատվականի Նազարյանի դիմումը՝ մուտքագրված համայնքապետարանում 2017 թվականի սեպտեմբերի08-ին 12410 թվագրմամբ:

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Գյումրի քաղաքի ՆՍտեփանյան փողոց 1-ին փակուղի N8 հասցեի օրինականացված 263,35(երկու հարյուր վաթսուներեք ամբողջ երեսունհինգ հարյուրերորդական)քառակուսի մետր արտաքին մակերեսով 222,44 երկու հարյուր քսաներկու ամբողջ քառասունչորս հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի շինությունը մինչև 2020 թվականի դեկտեմբերի 31-ը գործող վաճառքի գներով որը կազմում է 869055(ութ հարյուր վաթսունինը հազար հիսունհինգ) Հայաստանի Հանրապետության դրամ ուղղակի վաճառքի միջոցով օտարել տվյալ կառույցն իրականացրած քաղաքացի: Արթուր Պատվականի Նազարյանին:
2. Գյումրի քաղաքի ՆՍտեփանյան փողոց 1-ին փակուղի N8 հասցեի, 797՝22(յոթ հարյուր իննսունյոթ ամբողջ քսաներկու հարյուրերորդական)) քառակուսի մետր մակերեսով հողամասը, մինչև 2020 թվականի դեկտեմբերի 31-ը գործող վաճառքի գներով՝ տվյալ հողամասի կադաստրային գնի չափով, որը կազմում է 810 (ութ հարյուր տաս) Հայաստանի Հանրապետության դրամ 1.0 (մեկ) քառակուսի մետրի դիմաց, ընդամենը 645748(վեց հարյուր քառասունհինգ հազար յոթ հարյուր քառասունութ) Հայաստանի Հանրապետության դրամ, ուղղակի վաճառքի միջոցով օտարել քաղաքացի Արթուր Պատվականի Նազարյանին:
3. Գույքի օտարման վերաբերյալ Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի որոշումը կայացնելուց հետո, քաղաքացի, Արթուր Պատվականի Նազարյանը պարտավոր է 60 օրվա ընթացքում կատարել վճարումները:
4. Առքուվաճառքի հետ կապված պայմանագրի նոտարական վավերացման և պայմանագրից ծագող իրավունքների պետական գրանցման ծախսերը կատարել քաղաքացի Արթուր Պատվականի Նազարյանի միջոցների հաշվին:

25.12.2023

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

ք.Գյումրի
2023

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«25» դեկտեմբերի 2023 թվականի N 3258Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 16 -Ի N 516-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2022 թվականի մարտի 16-ի <<Քաղաքացիներ Կարապետ և Լուսինե Փահլևանյաններին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Գործարանային նրբանցք N 44/2 հասցեի հողամասում ինքնակամ կառուցված 170,1 քառակուսի մետր արտաքին (132,3 քառակուսի մետր ներքին) մակերեսով բնակելի տունը օրինական ճանաչելու մասին>> N 516-Ա որոշման մեջ լրացում կատարելու անհրաժեշտություն է առաջացել, որոշման մեջ տեղ գտած վրիպակի պատճառով (հիմք՝ Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի, գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին 08/09/2023 թվականի N Կ-08092023-08-0155 որոշում):

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասով և 34-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2022 թվականի մարտի 16-ի <<Քաղաքացիներ Կարապետ և Լուսինե Փահլևանյաններին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Գործարանային նրբանցք N 44/2 հասցեի հողամասում ինքնակամ կառուցված 170,1 քառակուսի մետր արտաքին (132,3 քառակուսի մետր ներքին) մակերեսով բնակելի տունը օրինական ճանաչելու մասին>> N 516-Ա որոշման մեջ կատարել հետևյալ լրացումը՝

1) նախաբանում <<թվագրմամբ>> բառից հետո լրացնել <<և հիմք՝ ինքնակամ կառույցը կադաստրի կոմիտեում հաշվառված լինելու փաստը հաստատող 2023ZFHQNN ծածկագիրը>> բառերը և թվերը:

25.12.2023

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

ք.Գյումրի
2023 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«25» դեկտեմբերի 2023 թվականի N3257Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ Ղ ՂՈՒԿԱՍՅԱՆ ՓՈՂՈՑ 1-ԻՆ ՇԱՐՔ N 23/2 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ 2,78 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ (ԱՐՏԱՔԻՆ) 1,45 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ (ՆԵՐՔԻՆ) ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻՆ, 1,39 ՔԱՌ.Մ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ՔԱՂԱՔԱՑԻ ՍԵՎԱԿ ԳՈՒՐԳԵՆԻ ՍԱՀԱԿՅԱՆԻՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գյումրի քաղաքի Ղ. Ղուկասյան փողոց 1-ին շարք N23/2 հասցեում գտնվող 1,39 (մեկ ամբողջ երեսունինը հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասը և բնակելին հանդիսանում են համայնքային սեփականություն (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N22112023-08-0046 վկայական):

Նկատի ունենալով, որ շինությունը չի գտնվում Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողերի վրա, համաձայն Հայաստանի Հանրապետության Կառավարության կողմից 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ բաժնի, ղեկավարվելով <<Տեղական Ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, հիմք ընդունելով Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 13-ի N 178-Ա որոշումը և քաղաքացի Սևակ Սահակյանի դիմումը՝ (մուտքագրված համայնքապետարանում 2023 թվականի ապրիլի 14-ին 6513 թվագրմամբ)՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Գյումրի քաղաքի Ղ. Ղուկասյան փողոց 1-ին շարք N23/2 հասցեում գտնվող 2,78 (երկու ամբողջ յոթանասունութ) քառակուսի մետր արտաքին 1,45 (մեկ ամբողջ քառասունհինգ հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին) մակերեսով բնակելին, 7576 (յոթ հազար հինգ հարյուր յոթանասունվեց) Հայաստանի Հանրապետության դրամ, արժեքով ուղղակի վաճառքի միջոցով օտարել տվյալ կառույցն իրականացրած քաղաքացի Սևակ Գուրգենի Սահակյանին:
2. Գյումրի քաղաքի Ղ. Ղուկասյան փողոց 1-ին շարք N23/2 հասցեում գտնվող 1,39(մեկ ամբողջ երեսունինը հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասը կադաստրային գնի չափով, որը օտարման պահին կազմում է 10514 (տաս հազար հինգ հարյուր տասնչորս) Հայաստանի Հանրապետության դրամ 1.0 (մեկ) քառակուսի մետրի դիմաց, ընդամենը՝ 14615 (տասնչորս հազար վեց հարյուր տասնհինգ) Հայաստանի Հանրապետության դրամ, ուղղակի վաճառքի միջոցով օտարել քաղաքացի Սևակ Գուրգենի Սահակյանին 3.Գույքի օտարման վերաբերյալ Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի որոշումը կայացնելուց հետո, քաղաքացի Սևակ Սահակյանը պարտավոր է 60 օրվա ընթացքում կատարել վճարումները:
4.Առքուվաճառքի հետ կապված պայմանագրի նոտարական վավերացման և պայմանագրից ծագող իրավունքների պետական գրանցման ծախսերը կատարել քաղաքացի Սևակ Գուրգեն Սահակյանի միջոցների հաշվին:

25.12.2023

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ**

ք.Գյումրի
2023 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«25» դեկտեմբերի 2023 թվականի N3256-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 27 -Ի N 1876-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2023 թվականի հուլիսի 27-ի <<Քաղաքացի Միսակ Սերյոժայի Մարտիրոսյանին սեփականության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Մյասնիկյան փողոց N 175 հասցեի տան հողամասում ինքնակամ կառուցված 42,08 քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի շինությունները, ինքնակամ բացված 1(մեկ) դուռը օրինական ճանաչելու և օրինական հողամասին կից ավել օգտագործվող 6,7 քառակուսի մետր մակերեսով հողամասի և նրա վրա առկա շինության կարգավիճակի մասին>> N 1876-Ա որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն է առաջացել, չափագրության մեջ տեղ գտած սխալի պատճառով (հիմք՝ Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի, գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին 23/11/2023 թվականի N Կ-23112023-08-0187 որոշում): Ներկայացվել է նոր ճշտգրտված չափագրություն:

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 3-րդ մասով և 34-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1 Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2023 թվականի հուլիսի 27-ի <<Քաղաքացի Միսակ Սերյոժայի Մարտիրոսյանին սեփականության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Մյասնիկյան փողոց N 175 հասցեի տան հողամասում ինքնակամ կառուցված 42,08 քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի շինությունները, ինքնակամ բացված 1(մեկ) դուռը օրինական ճանաչելու և օրինական հողամասին կից ավել օգտագործվող 6,7 քառակուսի մետր մակերեսով հողամասի և նրա վրա առկա շինության կարգավիճակի մասին>> N 1876-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները ՝

1) վերնագրում, նախաբանում,որոշման 2-րդ կետում <<դուռը>> բառից հետո լրացնել <<ինքնակամ փակված 1 (մեկ) պատուհան>> թիվը և բառերը.
2) վերնագրում,նախաբանում,որոշման 2-րդ կետում <<42,08 (քառասուներկու ամբողջ ութ հարյուրերորդական)>> թիվը և բառերը փոխարինել <<43,43 (քառասուներեք ամբողջ քառասուներեք հարյուրերորդական)>> թվով և բառերով.
3) որոշման 2-րդ կետում <<շինությունները>> բառից հետո լրացնել <<և 2001 թվականի մայիսի 15-ից հետո կառուցված 1,35 (մեկ ամբողջ երեսունհինգ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հարթակը և ծածկը>> թիվը և բառերը.
4) որոշման 2-րդ կետում <<2725 (երկու հազար յոթ հարյուր քսանհինգ)>> թիվը և բառերը փոխարինել <<12808 (տասներկու հազար ութ հարյուր ութ)>> թվով և բառերով.
5) նախաբանում <<ծածկագրերը>> բառից առաջ լրացնել <<2023V4QEL6>> թվերը և տառերը.
6) որոշման 1-ին կետում <<6,7(վեց ամբողջ յոթ տասնորդական)>> թիվը և բառերը փոխարինել <<4,72(չորս ամբողջ յոթանասուներկու հարյուրերորդական)>>թվով և բառերով:

25.12.2023

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ**

ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«25» դեկտեմբերի 2023 **թվականի** N 3255-Ա

ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ ԳԱԳԻԿ ՍՈՒՐԻԿԻ ՄԱՏԻՆՅԱՆԻՆ (3/4 ՄԱՍ) ԵՎ ՌԻՏԱ ՍՈՒՐԻԿԻ ՄԱՏԻՆՅԱՆԻՆ (1/4 ՄԱՍ) ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԼԵՎՈՆ ՄԱԴՈՅԱՆ ՓՈՂՈՑԻ N 153 ՀԱՍՑԵԻ ՏԱՆ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ 76.84 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քաղաքացիներ Գագիկ Սուրիկի Մատինյանին (3/4 մաս) և Ռիտա Սուրիկի Մատինյանին (1/4 մաս) ժառանգության իրավունքով պատկանող (հիմք՝ ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիր, տրված 2010 թվականի հոկտեմբերի 11-ին N 6473, ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիր, տրված 2023 թվականի հունվարի 18-ին N 538) Գյումրի քաղաքի Լևոն Մադոյան փողոցի N 153 հասցեի տան հողամասում 2001 թվականի մայիսի 15-ից հետո ինքնակամ կառուցված է 19.75 (տասնինն ամբողջ յոթանասունհինգ հարյուրերորդական) քառակուսի մետր արտաքին 19.13 (տասնինն ամբողջ տասներեք հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով ավտոտնակ, իսկ մինչև 2001 թվականի մայիսի 15-ը ինքնակամ կառուցված է 57.71 (հիսունյոթ ամբողջ յոթանասունմեկ հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի շինություններ, որոնք հաշվառված են Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեում 2023JBVWUB ծածկագրով:

Քաղաքացի Գագիկ Սուրիկի Մատինյանը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին նշված շինություններն օրինական ճանաչելու խնդրանքով:

Նկատի ունենալով վերոգրյալը, հաշվի առնելով, որ շինությունները չեն գտնվում հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 22-րդ կետի, 22.1 կետի և հիմք ընդունելով քաղաքացի Գագիկ Սուրիկի Մատինյանի դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 2023 թվականի սեպտեմբերի 14-ին N 19468 թվագրմամբ)՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Քաղաքացիներ Գագիկ Սուրիկի Մատինյանին (3/4 մաս) և Ռիտա Սուրիկի Մատինյանին (1/4 մաս) ժառանգության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Լևոն Մադոյան փողոցի N 153 հասցեի տան հողամասում ինքնակամ կառուցված 57.71 (հիսունյոթ ամբողջ յոթանասունմեկ հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի շինությունները ճանաչել օրինական:
2. Քաղաքացիներ Գագիկ Սուրիկի Մատինյանին (3/4 մաս) և Ռիտա Սուրիկի Մատինյանին (1/4 մաս) ժառանգության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Լևոն Մադոյան փողոցի N 153 հասցեի տան հողամասում ինքնակամ կառուցված 19.75 (տասնինն ամբողջ յոթանասունհինգ հարյուրերորդական) քառակուսի մետր արտաքին 19.13 (տասնինն ամբողջ տասներեք հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով ավտոտնակը ճանաչել օրինական, տեղական բյուջե ենթակա է գանձման 53819 (հիսուներեք հազար ութ հարյուր տասնինը) Հայաստանի Հանրապետության դրամ:
3. Օրինականացման վերաբերյալ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարները 60 օրվա ընթացքում չվճարելու դեպքում սույն որոշումը համարվում է ուժը կորցրած:
4. Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացիներ Գագիկ Սուրիկի Մատինյանին և Ռիտա Սուրիկի Մատինյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

22.12.2023

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ**

2023թ. դեկտեմբերի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«25» դեկտեմբերի 2023 թվականի N 3254Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԱՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ ՓՈՂՈՑ 10 ՇԵՆՔ N18 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԱՐԱՆԻ ՄԻ ՄԱՍԻ ԳՈՐԾԱՌԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գյումրի քաղաքի Արամ Խաչատրյան փողոց 10 շենք N18 հասցեի բնակարանը ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանում է քաղաքացիներ Սոֆյա Հարությունի Սարգսյանին, Արմենուհի Արսենի Բարաքեզյանին, Միեր Արսենի Բարաքեզյանին և Մարինե Արսենի Բարաքեզյանին (հիմք անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 2435595 վկայական):

Քաղաքացի Միեր Արսենի Բարաքեզյանը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով իրեն և Սոֆյա Հարությունի Սարգսյանին, Արմենուհի Արսենի Բարաքեզյանին, Մարինե Արսենի Բարաքեզյանին պատկանող Գյումրի քաղաքի Արամ Խաչատրյան փողոց 10 շենք N18 հասցեի բնակարանի մի մասի՝ 31,5 (երեսունմեկ ամբողջ հինգ տասնորդական) քառակուսի մետր մակերեսով սենքի գործառական նշանակությունը բնակելիից հասարակական՝ որպես առևտրի և սպասարկման օբյեկտ փոփոխելու խնդրանքով:

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 23-րդ հոդվածի 6-րդ մասով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2002թ. փետրվարի 2-ի թիվ 88 որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետությունում շենքերի, շինությունների կամ դրանց մի հատվածի գործառական նշանակությունը փոփոխելու կարգի» և հիմք ընդունելով քաղաքացի Միեր Արսենի Բարաքեզյանի դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 2023 թվականի հոկտեմբերի 12-ին N 22040 թվագրմամբ).

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Փոփոխել Գյումրի քաղաքի Արամ Խաչատրյան փողոց 10 շենք N18 հասցեի բնակարանի մի մասի՝ 31,5 (երեսունմեկ ամբողջ հինգ տասնորդական) քառակուսի մետր մակերեսով սենքի գործառական նշանակությունը, որպես առևտրի և սպասարկման օբյեկտ:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում իրավական ակտի ընդունման մասին Սոֆյա Հարությունի Սարգսյանին, Արմենուհի Արսենի Բարաքեզյանին, Միեր Արսենի Բարաքեզյանին և Մարինե Արսենի Բարաքեզյանին պատշաճ կարգով իրազեկման օրվան հաջորդող օրվանից:
3. Գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ
2023թ. ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«25» դեկտեմբերի 2023 **թվականի** N 3253Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԱՆԻ ԹԱՂԱՄԱՍԻ 7-ՐԴ ՓՈՂՈՑԻ N 17 ՀԱՍՑԵԻ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԿԻՑ 123.73 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ԵՎ ՆՐԱ ՎՐԱ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ 70.0 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ԱՐՏԱՔԻՆ 60.71 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԱՎՏՈՏՆԱԿՆ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քաղաքացիներ Արսեն Լեռնիկի Կիրակոսյանին և Ալետա Գրիշայի Կարապետյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող (հիմք՝ անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման N 2528403 վկայական) Գյումրի քաղաքի Անի թաղամասի 7-րդ փողոցի N 17 հասցեի հողամասին կից 123.73 (մեկ հարյուր քսաներեք ամբողջ յոթանասուներեք հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով համայնքապատկան հողամասում 2001 թվականի մայիսի 15-ից հետո ինքնակամ կառուցվել է 70.0 (յոթանասուն) քառակուսի մետր արտաքին 60.71 (վաթսուն ամբողջ յոթանասունմեկ հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով ավտոտնակ, որը տիրապետում և օգտագործում են քաղաքացիներ Արսեն Լեռնիկի Կիրակոսյանը և Ալետա Գրիշայի Կարապետյանը:

Նկատի ունենալով, որ շինության պահպանելը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, չի գտնվում հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 731-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետի, թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 3-րդ կետի, 4-րդ բաժնի 33-րդ կետի և հիմք ընդունելով շինությունը Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեում հաշվառված լինելու փաստը հավաստող տեղեկանքը N 2023LNCFRH)՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Գյումրի քաղաքի Անի թաղամասի 7-րդ փողոցի N 17 հասցեի հողամասին կից 123.73 (մեկ հարյուր քսաներեք ամբողջ յոթանասուներեք հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով համայնքապատկան հողամասում ինքնակամ կառուցված 70.0 (յոթանասուն) քառակուսի մետր արտաքին 60.71 (վաթսուն ամբողջ յոթանասունմեկ հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով ավտոտնակը համարել համայնքի սեփականություն և այն ճանաչել օրինական:
2. Սույն որոշման 1-ին կետում նշված օրինականացված շինությունը և հողամասը գնման նախապատվության իրավունքով (ուղղակի վաճառք) ձեռք բերելու առաջարկություն անել քաղաքացիներ Արսեն Լեռնիկի Կիրակոսյանին և Ալետա Գրիշայի Կարապետյանին:
3. Սահմանված կարգով նախապատրաստել պետական գրանցման համար օրենքով նախատեսված փաստաթղթերի փաթեթը (պատասխանատու՝ քաղաքաշինության և հողօգտագործման բաժին):
4. Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

22.12.2023

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ**

2023թ. ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-01; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ
ՔԱՂԱՔԱՑԻ ՄԵԼՔՈՆ ՍԱՐԻԲԵԿԻ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺԻ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«25» դեկտեմբերի 2023 թվական N 3252 -Ա

1. ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ ՄԱՍ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավար Վարդգես Մելսիկի Սամսոնյանս, վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 275-րդ հոդվածով սահմանված կարգով, վարչական իրավախախտման վերաբերյալ գործը քննության նախապատրաստելով, ղեկավարվելով՝ Օրենսգրքի 219[1] հոդվածով, 2023 թվականի դեկտեմբերի 22-ին ժամը՝ 15:20 Գյումրի քաղաքում, դռնբաց վարույթի ընթացքում, քաղաքացի՝ Մելքոն Սարիբեկի Հակոբյանի (հասցե՝ ՀՀ Շիրակի մարզ, ք.Գյումրի, Ղուկասյան փողոց, 1 շ., բն.25/4 անձնագիր՝ AP 0622868, տրված՝ 10.11.2016 թվականին) բացակայությամբ, օրենսգրքի 277–րդ հոդվածով սահմանված ժամկետների պահպանմամբ, 248–րդ հոդվածով սահմանված սկզբունքներով և 278–279–րդ հոդվածներով սահմանված կարգով, քննելով Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի առևտրի և սպասարկման ոլորտի համակարգման բաժնի աշխատակիցների կողմից 2023 թվականի հոկտեմբերի 24-ին կազմած քաղաքացի՝ Մելքոն Սարիբեկի Հակոբյանի կողմից Օրենսգրքի՝ 162–րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված վարչական իրավախախտում կատարելու վերաբերյալ արձանագրությունը և կից նյութերը, պարզեցի.

2.ԳՈՐԾԻ ԼՈՒԾՄԱՆ ՀԱՄԱՐ ԷԱԿԱՆ ՓԱՍՏԵՐ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի առևտրի և սպասարկման ոլորտի համակարգման բաժնի աշխատակիցներ՝ Ա.Խնձրցյանը, Ռ.Կարապետյանը, Ա.Եդիգարյանը, ՀՀ ՆԳՆ ոստիկանության Շիրակի մարզային վարչության Գյումրի քաղաքի Կումայրիի բաժնի ներկայացուցիչ՝ ոստիկանության մայոր՝ Ս.Մելիքսեթյանը իրենց պաշտոնական պարտականությունները կատարելիս՝ 2023 թվականի հոկտեմբերի 24–ին հայտնաբերել և օրենսգրքի 9–րդ, 251–րդ, 254–րդ և 255–րդ հոդվածներով սահմանված կարգով կազմել են քաղաքացի՝ Մելքոն

Սարիբեկի Հակոբյանի կողմից Օրենսգրքի 162–րդ հոդվածի 1–ին մասով նախատեսված վարչական իրավախախտում կատարելու վերաբերյալ արձանագրությունը:

2023 թվականի հոկտեմբերի 24–ին բացահայտվել և տեղում արձանագրվել է, որ քաղաքացի՝ Մելքոն Սարիբեկի Հակոբյանը առանց համապատասխան թույլտվության, Գյումրի քաղաքի Ղանդիլյան 22 ա հսցեում՝ ոչ սահմանված վայրում իրականացնում է առևտուր, այսինքն քաղաքացի՝ Մելքոն Սարիբեկի Հակոբյանի կողմից կատարվել է վարչական իրավախախտում, որը նախատեսված է Օրենսգրքի 162–րդ հոդվածի 1–ին մասով:

Քաղաքացի՝ Մելքոն Սարիբեկի Հակոբյանի վարչական վարույթի լսումների օրվա, տեղի և ժամի մասին պատշաճ ծանուցվել է, պատշաճ ծանուցումը ապահովել է Հայաստանի Հանրապետության ինտերնետով ծանուցման պաշտոնական «Ազդարար» կայքի միջոցով:

Քաղաքացի՝ Մելքոն Սարիբեկի Հակոբյանի կողմից վարչական իրավախախտում կատարելու հանգամանքները ապացուցված են 2023 թվականի հոկտեմբերի 24–ին պատշաճ կարգով կազմված արձանագրությամբ և կից ներկայացրած նյութերով:

Օրենսգրքի 162 հոդվածի 1–ին մասի համաձայն՝ ոչ սահմանված տեղերում կամ օրենսդրությամբ սահմանված պահանջների խախտմամբ առևտուր իրականացնելը կամ ծառայություն մատուցելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի յոթանասունապատիկից մինչև հարյուրապատիկի չափով՝ առևտրի կամ ծառայությունների մատուցման ընթացքում օգտագործվող և իրավախախտում կատարած անձին կամ երրորդ անձին սեփականության իրավունքով պատկանող առարկաների բռնագրավմամբ կամ առանց դրա:

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45–րդ հոդվածի 1–ին մասի 1-ին կետի համաձայն՝ համայնքի ղեկավարը օրենքով սահմանված կարգով հսկողություն է իրականացնում առևտրի և հանրային սննդի ոլորտում:

Ի նկատի ունենալով վերոգրյալը՝ ամբողջությամբ հաստատված եմ համարում այն փաստը, որ քաղաքացի՝ Մելքոն Սարիբեկի Հակոբյանի կողմից թույլ է տրվել վարչական իրավախախտում, որը նախատեսված է Օրենսգրքի 162–րդ հոդվածի 1–ին մասով և առկա չէ Օրենսգրքի 247-րդ հոդվածով սահմանված վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթը բացառող որևէ հանգամանք:

3.ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

Ղեկավարվելով Օրենսգրքի՝ 23-րդ հոդվածի 2-րդ կետի, 32-րդ, 37-րդ, 281-րդ հոդվածի, 282-րդ հոդվածի 1-ին կետի, 283-րդ, 286-288-րդ, 298-րդ, 305-րդ և 162–րդ հոդվածի 1–ին մասով, «Նվազագույն ամսեկան աշխատավարձի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ, 55-րդ, 58-րդ հոդվածի 1-ին կետով, 59-րդ, 60-րդ, 69-րդ, 70-րդ, 71-րդ հոդվածների դրույթներով՝

ՈՐՈՇԵՑԻ

1. Քաղաքացի՝ Մելքոն Սարիբեկի Հակոբյանի ենթարկել վարչական պատասխանատվության, նշանակելով տուգանք՝ սահմանված նվազագույն աշխատավարձի յոթանասունապատիկի չափով, 70 000 (յոթանասուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամի չափով:
2. Պարտավորեցնել քաղաքացի՝ Մելքոն Սարիբեկի Հակոբյանին սույն որոշումը ստանալուց հետո բացառել՝ Գյումրի քաղաքի տարածքում ոչ սահմանված վայրում առանց թույլտվության առևտրի իրականացումը:
3. Որոշման օրինակը եռօրյա ժամկետում ուղարկել քաղաքացի՝ Մելքոն Սարիբեկի Հակոբյանին:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի՝ Մելքոն Սարիբեկի Հակոբյանին պատշաճ կարգով իրազեկելու պահից:
5. Սույն որոշումը կարող է գանգատարկվել քաղաքացի՝ Մելքոն Սարիբեկի Հակոբյանի կողմից որոշման ուժի մեջ մտնելու օրվանից հետո երկամսյա ժամկետում՝ վարչական, կամ դատական կարգով:
6. Սույն որոշմամբ նշանակված տուգանքը քաղաքացի՝ Մելքոն Սարիբեկի Հակոբյանի կողմից պետք է վճարվի սույն որոշումը նրան հանձնելու օրվանից ոչ ուշ, քան տասնհինգ օրվա ընթացքում՝ Գյումրու համայնքապետարանի թիվ 900 215 301 160 հաշվեհամարին, իսկ այդ որոշումը գանգատարկելու կամ բողոքարկելու դեպքում՝ գանգատը կամ բողոքը առանց բավարարման թողնելու մասին ծանուցման օրվանից ոչ ուշ, քան տասնհինգ օրվա ընթացքում:
7. Տուգանք նշանակելու մասին որոշման հարկադիր կատարումը իրականացվում է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածի համաձայն:

25.12.2023

Ք. Գյումրի

Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-01; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՔԱՂԱՔԱՑԻ ԱՐԹՈՒՐ ՌԱՖԻԿԻ ՂԱԶԱՐՅԱՆԻՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺԻ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«25»«դեկտեմբերի» 2023 թվական N 3251 -Ա

1. ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ ՄԱՍ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավար Վարդգես Մելսիկի Սամսոնյանս, վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 275-րդ հոդվածով սահմանված կարգով, վարչական իրավախախտման վերաբերյալ գործը քննության նախապատրաստելով, ղեկավարվելով՝ Օրենսգրքի 219[1] հոդվածով, 2023 թվականի դեկտեմբերի 22-ին ժամը՝ 15:00 Գյումրի քաղաքում, դռնբաց վարույթի ընթացքում, քաղաքացի՝ Արթուր Ռաֆիկի Ղազարյանի (հասցե՝ ՀՀ Շիրակի մարզ, ք.Գյումրի, Բորյան 2, անձնագիր՝ ԲԱ 2351488, տրված՝ 07.07.2015 թվականին 016-ի կողմից, ՀԾՀ 3002700029) բացակայությամբ, օրենսգրքի 277–րդ հոդվածով սահմանված ժամկետների պահպանմամբ, 248–րդ հոդվածով սահմանված սկզբունքներով և 278–279–րդ հոդվածներով սահմանված կարգով, քննելով Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի առևտրի և սպասարկման ոլորտի համակարգման բաժնի աշխատակիցների կողմից 2023 թվականի հոկտեմբերի 24-ին կազմած քաղաքացի՝ Արթուր Ռաֆիկի Ղազարյանի կողմից Օրենսգրքի՝ 162–րդ հոդվածի 1–ին մասով նախատեսված վարչական իրավախախտում կատարելու վերաբերյալ արձանագրությունը և կից նյութերը, պարզեցի.

2.ԳՈՐԾԻ ԼՈՒԾՄԱՆ ՀԱՄԱՐ ԷԱԿԱՆ ՓԱՍՏԵՐ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի առևտրի և սպասարկման ոլորտի համակարգման բաժնի աշխատակիցներ՝ Ա.Խնձրցյանը, Ռ.Կարապետյանը, Ա.Եդիգարյանը, ՀՀ ՆԳՆ ոստիկանության Շիրակի մարզային վարչության Գյումրի քաղաքի Կումայրիի բաժնի ներկայացուցիչ՝ ոստիկանության մայոր՝ Ս.Մելիքսեթյանը իրենց պաշտոնական պարտականությունները կատարելիս՝ 2023 թվականի հոկտեմբերի 24–ին հայտնաբերել և օրենսգրքի 9–րդ, 251–րդ, 254–րդ և 255–րդ հոդվածներով սահմանված կարգով կազմել են քաղաքացի՝ Աշոտ Ռաֆիկի

Ղազարյանի կողմից Օրենսգրքի 162–րդ հոդվածի 1–ին մասով նախատեսված վարչական իրավախախտում կատարելու վերաբերյալ արձանագրությունը:

2023 թվականի հոկտեմբերի 24–ին բացահայտվել և տեղում արձանագրվել է, որ քաղաքացի՝ Արթուր Ռաֆիկի Ղազարյանը առանց համապատասխան թույլտվության, Գյումրի քաղաքի Մայակովսկի-Ծուլուկիձե փողոցների խաչմերուկում՝ ոչ սահմանված վայրում իրականացնում է առևտուր, այսինքն քաղաքացի՝ Արթուր Ռաֆիկի Ղազարյանի կողմից կատարվել է վարչական իրավախախտում, որը նախատեսված է Օրենսգրքի 162–րդ հոդվածի 1–ին մասով:

Քաղաքացի՝ Արթուր Ռաֆիկի Ղազարյանի վարչական վարույթի լսումների օրվա, տեղի և ժամի մասին պատշաճ ծանուցվել է, պատշաճ ծանուցումը ապահովել է Հայաստանի Հանրապետության ինտերնետով ծանուցման պաշտոնական «Ազդարար.ամ» կայքի միջոցով:

Քաղաքացի՝ Արթուր Ռաֆիկի Ղազարյանի կողմից վարչական իրավախախտում կատարելու հանգամանքները ապացուցված են 2023 թվականի հոկտեմբերի 24–ին պատշաճ կարգով կազմված արձանագրությամբ և կից ներկայացրած նյութերով:

Օրենսգրքի 162 հոդվածի 1–ին մասի համաձայն՝ ոչ սահմանված տեղերում կամ օրենսդրությամբ սահմանված պահանջների խախտմամբ առևտուր իրականացնելը կամ ծառայություն մատուցելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի յոթանասունապատիկից մինչև հարյուրապատիկի չափով՝ առևտրի կամ ծառայությունների մատուցման ընթացքում օգտագործվող և իրավախախտում կատարած անձին կամ երրորդ անձին սեփականության իրավունքով պատկանող առարկաների բռնագրավմամբ կամ առանց դրա:

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45–րդ հոդվածի 1–ին մասի 1-ին կետի համաձայն՝ համայնքի ղեկավարը օրենքով սահմանված կարգով հսկողություն է իրականացնում առևտրի և հանրային սննդի ոլորտում:

Ի նկատի ունենալով վերոգրյալը՝ ամբողջությամբ հաստատված եմ համարում այն փաստը, որ քաղաքացի՝ Արթուր Ռաֆիկի Ղազարյանի կողմից թույլ է տրվել վարչական իրավախախտում, որը նախատեսված է Օրենսգրքի 162–րդ հոդվածի 1–ին մասով և առկա չէ Օրենսգրքի 247-րդ հոդվածով սահմանված վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթը բացառող որևէ հանգամանք:

3.ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

Ղեկավարվելով Օրենսգրքի՝ 23-րդ հոդվածի 2-րդ կետի, 32-րդ, 37-րդ, 281-րդ հոդվածի, 282-րդ հոդվածի 1-ին կետի, 283-րդ, 286-288-րդ, 298-րդ, 305-րդ և 162–րդ հոդվածի 1–ին մասով, «Նվազագույն ամսեկան աշխատավարձի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ, 55-րդ, 58-րդ հոդվածի 1-ին կետով, 59-րդ, 60-րդ, 69-րդ, 70-րդ, 71-րդ հոդվածների դրույթներով՝

ՈՐՈՇԵՑԻ

1.Քաղաքացի՝ Արթուր Ռաֆիկի Ղազարյանին ենթարկել վարչական պատասխանատվության, նշանակելով տուգանք՝ սահմանված նվազագույն աշխատավարձի յոթանասունապատիկի չափով, 70 000 (յոթանասուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամի չափով:
2.Պարտավորեցնել քաղաքացի՝ Արթուր Ռաֆիկի Ղազարյանին սույն որոշումը ստանալուց հետո բացառել՝ Գյումրի քաղաքի տարածքում ոչ սահմանված վայրում առանց թույլտվության առևտրի իրականացումը
3.Որոշման օրինակը եռօրյա ժամկետում ուղարկել քաղաքացի՝ Արթուր Ռաֆիկի Ղազարյանին:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի՝ Արթուր Ռաֆիկի Ղազարյանին պատշաճ կարգով իրազեկելու պահից:
5. Սույն որոշումը կարող է գանգատարկվել քաղաքացի՝ Արթուր Ռաֆիկի Ղազարյանի կողմից որոշման ուժի մեջ մտնելու օրվանից հետո երկամսյա ժամկետում՝ վարչական, կամ դատական կարգով:
6. Սույն որոշմամբ նշանակված տուգանքը քաղաքացի՝ Արթուր Ռաֆիկի Ղազարյանի կողմից պետք է վճարվի սույն որոշումը նրան հանձնելու օրվանից ոչ ուշ, քան տասնհինգ օրվա ընթացքում՝ Գյումրու համայնքապետարանի թիվ 900 215 301 160 հաշվեհամարին, իսկ այդ որոշումը գանգատարկելու կամ բողոքարկելու դեպքում՝ գանգատը կամ բողոքը առանց բավարարման թողնելու մասին ծանուցման օրվանից ոչ ուշ, քան տասնհինգ օրվա ընթացքում:
7.Տուգանք նշանակելու մասին որոշման հարկադիր կատարումը իրականացվում է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածի համաձայն:

25.12.2023

Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«25» դեկտեմբերի 2023 թվականի N 3250-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏ ԳՈՒՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 65-րդ հոդվածի 1-ին, 2-րդ մասերով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2016 թվականի նոյեմբերի 10-ի N 171-Ն որոշման 1-ին կետով հաստատված կանոնակարգի 105-րդ, 106-րդ կետերով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Գյումրի համայնքի ղեկավարի նախաձեռնությամբ 2023 թվականի դեկտեմբերի 29-ին ժամը 15:00-ին գումարել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու արտահերթ նիստ (այսուհետ՝ նիստ):
2. Սահմանել նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:

Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

2023թ. Գյումրի

Հավելված՝
Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզի Գյումրի համայնքի
ղեկավարի 2023 թվականի
դեկտեմբերի 25-ի N 3250 -Ա որոշման

ՕՐԱԿԱՐԳ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

29 դեկտեմբերի 2023 թվական, սկիզբը՝ ժ.15:00

1. ԼՈՒՍԻՆԵ ՌՈՒԲԵՆԻ ՍԱՆՈՅԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Կ.ԲԱԴԱԼՅԱՆ)

2. ՍՈՒՐԵՆ ՍԵՊՈՒՀԻ ՋԱՆՈՅԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Կ.ԲԱԴԱԼՅԱՆ)

3. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝Հ.ՍՈՒԼԹԱՆՅԱՆ)

4. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 5-Ի №56-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Ա.ՈՍԿԱՆՅԱՆ)

5. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 09-Ի N 10-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Լ.ՋԻԼԱՎՅԱՆ)

6. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 22-Ի N 105-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Լ.ՋԻԼԱՎՅԱՆ)

7. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿՆԵՐԸ, ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի N 282-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Լ.ՋԻԼԱՎՅԱՆ)

8. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ ԵՎ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Լ.ՋԻԼԱՎՅԱՆ)

9. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Լ.ՋԻԼԱՎՅԱՆ)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-01; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՔԱՂԱՔԱՑԻ ՖՐՈՒՆԶԵ ՄԻՔԱՅԵԼԻ ԱՆՏՈՆՅԱՆԻՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺԻ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«25» դեկտեմբերի 2023 թվական N 3249 -Ա

1. ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ ՄԱՍ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավար Վարդգես Մելսիկի Սամսոնյանս, վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 275-րդ հոդվածով սահմանված կարգով, վարչական իրավախախտման վերաբերյալ գործը քննության նախապատրաստելով, ղեկավարվելով՝ Օրենսգրքի 219[1] հոդվածով, 2023 թվականի դեկտեմբերի 22-ին ժամը՝ 15:20 Գյումրի քաղաքում, դռնբաց վարույթի ընթացքում, քաղաքացի՝ Ֆրունզե Միքայելի Անտոնյանի (հասցե՝ ՀՀ Շիրակի մարզ, ք.Գյումրի, Տերյան փողոց, տուն 3, անձնագիր՝ AT 0430679) բացակայությամբ, օրենսգրքի 277–րդ հոդվածով սահմանված ժամկետների պահպանմամբ, 248–րդ հոդվածով սահմանված սկզբունքներով և 278–279–րդ հոդվածներով սահմանված կարգով, քննելով Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի առևտրի և սպասարկման ոլորտի համակարգման բաժնի աշխատակիցների կողմից 2023 թվականի հոկտեմբերի 24-ին կազմած քաղաքացի՝ Ֆրունզե Անտոնյանի կողմից Օրենսգրքի՝ 162–րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված վարչական իրավախախտում կատարելու վերաբերյալ արձանագրությունը և կից նյութերը, պարզեցի.

2.ԳՈՐԾԻ ԼՈՒԾՄԱՆ ՀԱՄԱՐ ԷԱԿԱՆ ՓԱՍՏԵՐ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի առևտրի և սպասարկման ոլորտի համակարգման բաժնի աշխատակիցներ՝ Ա.Խնձրցյանը, Ռ.Կարապետյանը, Ա.Եդիգարյանը, ՀՀ ՆԳՆ ոստիկանության Շիրակի մարզային վարչության Գյումրի քաղաքի Կումայրիի բաժնի ներկայացուցիչ՝ ոստիկանության մայոր՝ Ս.Մելիքսեթյանը իրենց պաշտոնական պարտականությունները կատարելիս՝ 2023 թվականի հոկտեմբերի 24–ին հայտնաբերել և օրենսգրքի 9–րդ, 251–րդ, 254–րդ և 255–րդ հոդվածներով սահմանված կարգով կազմել են քաղաքացի՝ Ֆրունզե Միքայելի Անտոնյանի կողմից Օրենսգրքի 162–րդ հոդվածի 1–ին մասով

նախատեսված վարչական իրավախախտում կատարելու վերաբերյալ արձանագրությունը:

2023 թվականի հոկտեմբերի 24–ին բացահայտվել և տեղում արձանագրվել է, որ քաղաքացի՝ Ֆրունզե Միքայելի Անտոնյանը առանց համապատասխան թույլտվության, Գյումրի քաղաքի Ղանդիլյան 22 ա հսցեում՝ ոչ սահմանված վայրում իրականացնում է առևտուր, այսինքն քաղաքացի՝ Ֆրունզե Միքայելի Անտոնյանի կողմից կատարվել է վարչական իրավախախտում, որը նախատեսված է Օրենսգրքի 162–րդ հոդվածի 1–ին մասով:

Քաղաքացի՝ Ֆրունզե Միքայելի Անտոնյանը վարչական վարույթի լսումների օրվա, տեղի և ժամի մասին պատշաճ ծանուցվել է, պատշաճ ծանուցումը ապահովել է Հայաստանի Հանրապետության ինտերնետով ծանուցման պաշտոնական «Ազդարար» կայքի միջոցով:

Քաղաքացի՝ Ֆրունզե Միքայելի Անտոնյանի կողմից վարչական իրավախախտում կատարելու հանգամանքները ապացուցված են 2023 թվականի հոկտեմբերի 24–ին պատշաճ կարգով կազմված արձանագրությամբ և կից ներկայացրած նյութերով:

Օրենսգրքի 162 հոդվածի 1–ին մասի համաձայն՝ ոչ սահմանված տեղերում կամ օրենսդրությամբ սահմանված պահանջների խախտմամբ առևտուր իրականացնելը կամ ծառայություն մատուցելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի յոթանասունապատիկից մինչև հարյուրապատիկի չափով՝ առևտրի կամ ծառայությունների մատուցման ընթացքում օգտագործվող և իրավախախտում կատարած անձին կամ երրորդ անձին սեփականության իրավունքով պատկանող առարկաների բռնագրավմամբ կամ առանց դրա:

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45–րդ հոդվածի 1–ին մասի 1-ին կետի համաձայն՝ համայնքի ղեկավարը օրենքով սահմանված կարգով հսկողություն է իրականացնում առևտրի և հանրային սննդի ոլորտում:

Ի նկատի ունենալով վերոգրյալը՝ ամբողջությամբ հաստատված եմ համարում այն փաստը, որ քաղաքացի՝ Ֆրունզե Միքայելի Անտոնյանի կողմից թույլ է տրվել վարչական իրավախախտում, որը նախատեսված է Օրենսգրքի 162–րդ հոդվածի 1–ին մասով և առկա չէ Օրենսգրքի 247-րդ հոդվածով սահմանված վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթը բացառող որևէ հանգամանք:

3.ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

Ղեկավարվելով Օրենսգրքի՝ 23-րդ հոդվածի 2-րդ կետի, 32-րդ, 37-րդ, 281-րդ հոդվածի, 282-րդ հոդվածի 1-ին կետի, 283-րդ, 286-288-րդ, 298-րդ, 305-րդ և 162–րդ հոդվածի 1–ին մասով, «Նվազագույն ամսեկան աշխատավարձի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ, 55-րդ, 58-րդ հոդվածի 1-ին կետով, 59-րդ, 60-րդ, 69-րդ, 70-րդ, 71-րդ հոդվածների դրույթներով՝

ՈՐՈՇԵՑԻ

1.Քաղաքացի՝ Ֆրունզե Միքայելի Անտոնյանին ենթարկել վարչական պատասխանատվության, նշանակելով տուգանք՝ սահմանված նվազագույն աշխատավարձի յոթանասունապատիկի չափով, 70 000 (յոթանասուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամի չափով:

2.Պարտավորեցնել քաղաքացի՝ Ֆրունզե Միքայելի Անտոնյանին սույն որոշումը ստանալուց հետո բացառել՝ Գյումրի քաղաքի տարածքում ոչ սահմանված վայրում առանց թույլտվության առևտրի իրականացումը:

3.Որոշման օրինակը եռօրյա ժամկետում ուղարկել քաղաքացի՝ Ֆրունզե Միքայելի Անտոնյանին:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի՝ Ֆրունզե Միքայելի Անտոնյանին պատշաճ կարգով իրազեկելու պահից:

5. Սույն որոշումը կարող է գանգատարկվել քաղաքացի՝ Ֆրունզե Միքայելի Անտոնյանի կողմից որոշման ուժի մեջ մտնելու օրվանից հետո երկամսյա ժամկետում՝ վարչական, կամ դատական կարգով:

6. Սույն որոշմամբ նշանակված տուգանքը քաղաքացի՝ Ֆրունզե Միքայելի Անտոնյանի կողմից պետք է վճարվի սույն որոշումը նրան հանձնելու օրվանից ոչ ուշ, քան տասնհինգ օրվա ընթացքում՝ Գյումրու համայնքապետարանի թիվ 900 215 301 160 հաշվեհամարին, իսկ այդ որոշումը գանգատարկելու կամ բողոքարկելու դեպքում՝ գանգատը կամ բողոքը առանց բավարարման թողնելու մասին ծանուցման օրվանից ոչ ուշ, քան տասնհինգ օրվա ընթացքում:

7.Տուգանք նշանակելու մասին որոշման հարկադիր կատարումը իրականացվում է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածի համաձայն:

25.12.2023

Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-01; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ
ՔԱՂԱՔԱՑԻ ԱՐՏԱԿ ԳՐԻՇԱՅԻ ՍԱԿԱՆՅԱՆԻՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺԻ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«25»«դեկտեմբերի» 2023 թվական N 3248-Ա

1. ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ ՄԱՍ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավար Վարդգես Մելսիկի Սամսոնյանս, վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 275-րդ հոդվածով սահմանված կարգով, վարչական իրավախախտման վերաբերյալ գործը քննության նախապատրաստելով, ղեկավարվելով՝ Օրենսգրքի 219[1] հոդվածով, 2023 թվականի դեկտեմբերի 22-ին ժամը՝ 15:10 Գյումրի քաղաքում, դռնբաց վարույթի ընթացքում, քաղաքացի՝ Արտակ Գրիշայի Սականյանի (հասցե՝ ՀՀ Շիրակի մարզ, ք.Գյումրի, Շիրակշին 3, 3-րդ բանավան, բնակարան 6ա, անձնագիր՝ AV 06074095, տրված՝ 20.01.2023թվականին) ներկայությամբ, օրենսգրքի 277–րդ հոդվածով սահմանված ժամկետների պահպանմամբ, 248–րդ հոդվածով սահմանված սկզբունքներով և 278–279–րդ հոդվածներով սահմանված կարգով, քննելով Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի առևտրի և սպասարկման ոլորտի համակարգման բաժնի աշխատակիցների կողմից 2023 թվականի հոկտեմբերի 24-ին կազմած քաղաքացի՝ Արտակ Գրիշայի Սականյանի կողմից Օրենսգրքի՝ 162–րդ հոդվածի 1–ին մասով նախատեսված վարչական իրավախախտում կատարելու վերաբերյալ արձանագրությունը և կից նյութերը, պարզեցի.

2.ԳՈՐԾԻ ԼՈՒԾՄԱՆ ՀԱՄԱՐ ԷԱԿԱՆ ՓԱՍՏԵՐ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի առևտրի և սպասարկման ոլորտի համակարգման բաժնի աշխատակիցներ՝ Ա.Խնձրցյանը, Ռ.Կարապետյանը, Ա.Եդիգարյանը, ՀՀ ՆԳՆ ոստիկանության Շիրակի մարզային վարչության Գյումրի քաղաքի Կումայրիի բաժնի ներկայացուցիչ՝ ոստիկանության մայոր՝ Ս.Մելիքսեթյանը և իրենց պաշտոնական պարտականությունները կատարելիս՝ 2023 թվականի հոկտեմբերի 24–ին հայտնաբերել և օրենսգրքի 9–րդ, 251–րդ, 254–րդ և 255–րդ հոդվածներով սահմանված կարգով կազմել են քաղաքացի՝ Արտակ

Գրիշայի Սականյանի կողմից Օրենսգրքի 162–րդ հոդվածի 1–ին մասով նախատեսված վարչական իրավախախտում կատարելու վերաբերյալ արձանագրությունը:

2023 թվականի հոկտեմբերի 24–ին բացահայտվել և տեղում արձանագրվել է, որ քաղաքացի՝ Արտակ Գրիշայի Սականյանը առանց համապատասխան թույլտվության, Գյումրի քաղաքի Մայակովսկի-Ծուլուկիձե փողոցների խաչմերուկում՝ ոչ սահմանված վայրում իրականացնում է առևտուր, այսինքն քաղաքացի՝ Արտակ Գրիշայի Սականյանի կողմից կատարվել է վարչական իրավախախտում, որը նախատեսված է Օրենսգրքի 162–րդ հոդվածի 1–ին մասով:

Քաղաքացի՝ Արտակ Գրիշայի Սականյանը վարչական վարույթի լսումների օրվա, տեղի և ժամի մասին պատշաճ ծանուցվել է, պատշաճ ծանուցումը ապահովել է փոստային ծառայության և Հայաստանի Հանրապետության ինտերնետով ծանուցման պաշտոնական կայքի միջոցով:

Քաղաքացի՝ Արտակ Գրիշայի Սականյանը վարչական վարույթի լսումներին հայտնեց, որ շարունակելու է բացօթյա առևտուրը:

Քաղաքացի՝ Արտակ Գրիշայի Սականյանը վարչական վարույթի ժամանակ կազմված արձանագրության մեջ հրաժարվեց՝ գրառում կատարելուց և արձանագրությունը ստորագրելուց:

Քաղաքացի՝ Արտակ Գրիշայի Սականյանի կողմից վարչական իրավախախտում կատարելու հանգամանքները ապացուցված են 2023 թվականի հոկտեմբերի 24–ին պատշաճ կարգով կազվմած արձանագրությամբ և կից ներկայացրած նյութերով:

Օրենսգրքի 162 հոդվածի 1–ին մասի համաձայն՝ ոչ սահմանված տեղերում կամ օրենսդրությամբ սահմանված պահանջների խախտմամբ առևտուր իրականացնելը կամ ծառայություն մատուցելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի յոթանասունապատիկից մինչև հարյուրապատիկի չափով՝ առևտրի կամ ծառայությունների մատուցման ընթացքում օգտագործվող և իրավախախտում կատարած անձին կամ երրորդ անձին սեփականության իրավունքով պատկանող առարկաների բռնագրավմամբ կամ առանց դրա:

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45–րդ հոդվածի 1–ին մասի 1-ին կետի համաձայն՝ համայնքի ղեկավարը օրենքով սահմանված կարգով հսկողություն է իրականացնում առևտրի և հանրային սննդի ոլորտում:

Ի նկատի ունենալով վերոգրյալը՝ ամբողջությամբ հաստատված եմ համարում այն փաստը, որ քաղաքացի՝ Արտակ Գրիշայի Սականյանի կողմից թույլ է տրվել վարչական իրավախախտում, որը նախատեսված է Օրենսգրքի 162–րդ հոդվածի 1–ին մասով և առկա չէ Օրենսգրքի 247-րդ հոդվածով սահմանված վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթը բացառող որևէ հանգամանք:

3.ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

Ղեկավարվելով Օրենսգրքի՝ 23-րդ հոդվածի 2-րդ կետի, 32-րդ, 37-րդ, 281-րդ հոդվածի, 282-րդ հոդվածի 1-ին կետի, 283-րդ, 286-288-րդ, 298-րդ, 305-րդ և 162–

րդ հոդվածի 1–ին մասով, «Նվազագույն ամսեկան աշխատավարձի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ, 55-րդ, 58-րդ հոդվածի 1-ին կետով, 59-րդ, 60-րդ, 69-րդ, 70-րդ, 71-րդ հոդվածների դրույթներով՝

ՈՐՈՇԵՑԻ

1.Քաղաքացի՝ Արտակ Գրիշայի Սականյանին ենթարկել վարչական պատասխանատվության, նշանակելով տուգանք՝ սահմանված նվազագույն աշխատավարձի յոթանասունապատիկի չափով, 70 000 (յոթանասուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամի չափով:
2.Պարտավորեցնել քաղաքացի՝ Արտակ Գրիշայի Սականյանին սույն որոշումը ստանալուց հետո բացառել՝ Գյումրի քաղաքի տարածքում ոչ սահմանված վայրում առանց թույլտվության առևտրի իրականացումը
3.Որոշման օրինակը եռօրյա ժամկետում ուղարկել քաղաքացի՝ Արտակ Գրիշայի Սականյանին:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի՝ Արտակ Գրիշայի Սականյանին պատշաճ կարգով իրազեկելու պահից:
5. Սույն որոշումը կարող է գանգատարկվել քաղաքացի՝ Արտակ Գրիշայի Սականյանի կողմից որոշման ուժի մեջ մտնելու օրվանից հետո երկամսյա ժամկետում՝ վարչական, կամ դատական կարգով:
6. Սույն որոշմամբ նշանակված տուգանքը քաղաքացի՝ Արտակ Գրիշայի Սականյանի կողմից պետք է վճարվի սույն որոշումը նրան հանձնելու օրվանից ոչ ուշ, քան տասնհինգ օրվա ընթացքում՝ Գյումրու համայնքապետարանի թիվ 900 215 301 160 հաշվեհամարին, իսկ այդ որոշումը գանգատարկելու կամ բողոքարկելու դեպքում՝ գանգատը կամ բողոքը առանց բավարարման թողնելու մասին ծանուցման օրվանից ոչ ուշ, քան տասնհինգ օրվա ընթացքում:
7.Տուգանք նշանակելու մասին որոշման հարկադիր կատարումը իրականացվում է «Վարչարարութան հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածի համաձայն:

25.12.2023

Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«25» դեկտեմբերի 2023 **թվականի** N 324Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԳԱՐԵԳԻՆ ՆԺԴԵՀԻ ՓՈՂՈՑԻ N 14/6 ՀԱՍՑԵԻ 21.28 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ԱՐՏԱՔԻՆ, 18.15 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԱՎՏՈՏՆԱԿԸ, 19.51 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ՔԱՂԱՔԱՑԻ ԱՐՄԵՆ ՌՈՒԴՈԼՖԻ ԻՍԱՀԱԿՅԱՆԻՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գյումրի քաղաքի Գարեգին Նժդեհի փողոցի N 14/6 հասցեի 19.51 (տասնինն ամբողջ հիսունմեկ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասով ավտոտնակը հանդիսանում է համայնքային սեփականություն (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 17072023-08-0023 վկայական):

Հաշվի առնելով, որ շինությունը չի գտնվում Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողերի վրա, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ բաժնի և հիմք ընդունելով Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2023 թվականի սեպտեմբերի 12-ի N 178-Ա որոշումը և քաղաքացի Արմեն Ռուդոլֆի Իսահակյանի դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 2022 թվականի հոկտեմբերի 04-ին N 17858 թվագրմամբ)՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Գյումրի քաղաքի Գարեգին Նժդեհի փողոցի N 14/6 հասցեի 21.28 (քսանմեկ ամբողջ քսանութ հարյուրերորդական) քառակուսի մետր արտաքին, 18.15 (տասնութ ամբողջ տասնհինգ հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով 57988 (հիսունյոթ հազար ինը հարյուր ութսունութ) Հայաստանի Հանրապետության դրամ արժեքով ավտոտնակն ուղղակի վաճառքի միջոցով օտարել տվյալ կառույցն իրականացրած քաղաքացի Արմեն Ռուդոլֆի Իսահակյանին:
2. Գյումրի քաղաքի Գարեգին Նժդեհի փողոցի N 14/6 հասցեի 19.51 (տասնինն ամբողջ հիսունմեկ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասը, տվյալ հողամասի կադաստրային արժեքով, որը օտարման պահին կազմում է 10514 (տասը հազար հինգ հարյուր տասնչորս) Հայաստանի Հանրապետության դրամ 1.0 (մեկ) քառակուսի մետրի դիմաց, ընդամենը՝ 205128 (երկու հարյուր հինգ հազար մեկ հարյուր քսանութ) Հայաստանի Հանրապետության դրամ, ուղղակի վաճառքի միջոցով օտարել քաղաքացի Արմեն Ռուդոլֆի Իսահակյանին:
3. Գույքի օտարման վերաբերյալ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի որոշումը կայացնելուց հետո քաղաքացի Արմեն Ռուդոլֆի Իսահակյանը պարտավոր է 60 օրվա ընթացքում կատարել վճարումներ:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Արմեն Ռուդոլֆի Իսահակյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:
5. Առքուվաճառքի հետ կապված պայմանագրի նոտարական վավերացման և պայմանագրից ծագող իրավունքների պետական գրանցման ծախսերը կատարել քաղաքացի Արմեն Ռուդոլֆի Իսահակյանի միջոցների հաշվին:

22.12.2023

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ**

2023թ. ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«25» դեկտեմբերի 2023 թվականի №3246-Ա

ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԹԲԻԼԻՍՅԱՆ ԽՃՈՒՂՈՒ 2-ՐԴ ԹԱՂԱՄԱՍՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՔԱՂԱՔԱՑԻ ՍԱՄՎԵԼ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ (ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳԻՐ 08-001-0513-0010) ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով և հիմք ընդունելով չափագրման արտոնագիր ունեցող «Արսեն Նուրիջանյան» ԱՁ-ի կողմից տրամադրված հողամասի, շինությունների հատակագծերը ու քաղաքացի Սամվել Հարությունյանի լիազորված անձ Արմեն Խոցանյանի դիմումը (համայնքապետարանում մուտքագրված №26497 թվագրմամբ)՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

Գյումրի քաղաքի Թբիլիսյան խճուղու 2-րդ թաղամասում գտնվող սեփականության իրավունքով քաղաքացի Սամվել Հարությունյանին պատկանող անշարժ գույքին (կադաստրային ծածկագիր 08-001-0513-0010) հասցե տրամադրելու մասին տրամադրել հասցե՝

ՀՀ Շիրակի մարզ, Գյումրի ք., Թբիլիսյան խճուղու 2-րդ թաղամաս, 47 բնակելի տուն

Недействительная подпись

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2023 թ. ք. Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

<<22>> դեկտեմբերի 2023 թվականի N 3245-Ա

ԼԵՎՈՆ ՀԱԿՈԲԻ ԲԱՐՍԵՂՅԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ -ԳԼԽԱՎՈՐ ՖԻՆԱՆՍԻՍՏԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ, 24-րդ կետերով, <<Համայնքային ծառայության մասին>> օրենքի 18-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հուլիսի 13-ի N 1002-Ն որոշմամբ հաստատված կարգի 18-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի տեղակալի 2023 թվականի դեկտեմբերի 15-ի թիվ 02.1//11525-2023 գրությունը, Լևոն Հակոբի Բարսեղյանի 2023 թվականի դեկտեմբերի 22-ի դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Լևոն Հակոբի Բարսեղյանին նշանակել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ-գլխավոր ֆինանսիստի (ծածկագիր՝ 2.1-1) ժամանակավոր պաշտոնակատար՝ 2023 թվականի դեկտեմբերի 25-ից:
2. Լևոն Հակոբի Բարսեղյանի հետ կնքել ժամկետային աշխատանքային պայմանագիր՝ 2023 թվականի դեկտեմբերի 25-ից մինչև համայնքային ծառայության նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար անցկացվող մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված մասնակցի նշանակումը:
3. Աշխատավարձը սահմանել համաձայն պաշտոնային դրույքաչափի՝ ամսական 248.000 (երկու հարյուր քառասունութ հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Լևոն Հակոբի Բարսեղյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

<< 22 >> դեկտեմբերի 2023 թվականի N 3244 -Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ << ՇԱԽՄԱՏԻ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ՄԱՐԶԱԴՊՐՈՑ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՄԱՐԻՆԵ ԳՈՒՐԳԵՆԻ ԳԵՎՈՐԳՅԱՆԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԵՐԿԱՐԱՑՎԱԾ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Աշխատանքային օրենսգրքի 160-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1599-Ն որոշմամբ հաստատված ցանկի 1-ին կետով և հիմք ընդունելով Մարինե Գուրգենի Գևորգյանի 2023 թվականի դեկտեմբերի 21-ի դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի << Շախմատի մանկապատանեկան մարզադպրոց >> համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Մարինե Գուրգենի Գևորգյանին տրամադրել 2023 թվականի աշխատանքային տարվա ամենամյա երկարացված արձակուրդը՝ 2023 թվականի դեկտեմբերի 25-ից:

2. Ամենամյա երկարացված արձակուրդը՝ 30 աշխատանքային օր՝ 2023 թվականի դեկտեմբերի 25-ից մինչև 2024 թվականի հունվարի 31-ը ներառյալ:

3. Ամենամյա երկարացված արձակուրդի ընթացքում Մարինե Գուրգենի Գևորգյանի աշխատանքային պարտականությունների կատարումը վերապահել նույն կազմակերպության ուսմասվար Վոլոդյա Գևորգի Մնացականյանին:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Մարինե Գուրգենի Գևորգյանին և Վոլոդյա Գևորգի Մնացականյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

22.12.2023

X

Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<< 22 >> դեկտեմբերի 2023 թվականի N 3243 -Ա

<<ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐ>> ԵՎ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՍՈՒԲՎԵՆՑԻՈՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՓՈՐՁԱԳԵՏ ՀՐԱՉՅԱ ՄՈՒԿՈՒՉԻ ՄԵԼՔՈՆՅԱՆԻ ԺԱՄԿԵՏԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և հիմք ընդունելով Հրաչյա Մուկուչի Մելքոնյանի 2023 թվականի դեկտեմբերի 19-ի դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. << Գյումրու քաղաքային ճանապարհներ >> և Գյումրի համայնքի մասնակցությամբ իրականացվող սուբվենցիոն ծրագրերի փորձագետ Հրաչյա Մուկուչի Մելքոնյանի ժամկետային աշխատանքային պայմանագրի գործողության ժամկետը երկարաձգել մինչև 2024 թվականի հուլիսի 1-ը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Հրաչյա Մուկուչի Մելքոնյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

22.12.2023

Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<< 22 >> դեկտեմբերի 2023 թվականի N 3242-Ա

<<ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐ>> ԵՎ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԾՐԱԳՐԵՐԻ ՓՈՐՁԱԳԵՏ ՍԱՄՎԵԼ ՍԵՐՅՈԺԱՅԻ ԵՆԳՈՅԱՆԻ ԺԱՄԿԵՏԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և հիմք ընդունելով Սամվել Սերյոժայի Ենգոյանի 2023 թվականի դեկտեմբերի 18-ի դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. << Գյումրու քաղաքային ճանապարհներ >> և Գյումրի համայնքի մասնակցությամբ իրականացվող ծրագրերի փորձագետ Սամվել Սերյոժայի Ենգոյանի հետ կնքված ժամկետային աշխատանքային պայմանագրի գործողության ժամկետը երկարաձգել մինչև 2024 թվականի հուլիսի 1-ը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Սամվել Սերյոժայի Ենգոյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Հ Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<< 22 >> դեկտեմբերի 2023 թվականի N 3241 -Ա

<<ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐ>> ԵՎ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՍՈՒԲՎԵՆՑԻՈՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՓՈՐՁԱԳԵՏ ՎԱՐԴԱՆ ԼՅՈՎԱՅԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ ԺԱՄԿԵՏԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և հիմք ընդունելով Վարդան Լյովայի Կարապետյանի 2023 թվականի դեկտեմբերի 18-ի դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. << Գյումրու քաղաքային ճանապարհներ >> և Գյումրի համայնքի մասնակցությամբ իրականացվող սուբվենցիոն ծրագրերի փորձագետ Վարդան Լյովայի Կարապետյանի հետ կնքված ժամկետային աշխատանքային պայմանագրի գործողության ժամկետը երկարաձգել մինչև 2024 թվականի հուլիսի 1-ը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Վարդան Լյովայի Կարապետյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

22.12.2023

Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<< 22 >> դեկտեմբերի 2023 թվականի N 3240 -Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ << ԳՅՈՒՄՐՈՒ ՄԱՆԿԻԿ-ՄՍՈՒՐ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ >> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ՆԵԼԼԻ ՀՐԱՉԻ ՄԵԼՔՈՆՅԱՆԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԵՐԿԱՐԱՑՎԱԾ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին >> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Աշխատանքային օրենսգրքի 160-րդ հոդվածով, 163-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1599-Ն որոշմամբ հաստատված ցանկի 1-ին կետով և հիմք ընդունելով Նելլի Հրաչի Մելքոնյանի 2023 թվականի դեկտեմբերի 22-ի դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի <<Գյումրու մանկիկ-մսուր մանկապարտեզ>>համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Նելլի Հրաչի Մելքոնյանին տրամադրել 2022 թվականի աշխատանքային տարվա ամենամյա երկարացված արձակուրդի մասը՝ 2023 թվականի դեկտեմբերի 29-ից:

2. Ամենամյա երկարացված արձակուրդի մասը՝ 15 աշխատանքային օր՝ 2023 թվականի դեկտեմբերի 29-ից մինչև 2024 թվականի հունվարի 22-ը ներառյալ:

3. Ամենամյա երկարացված արձակուրդի ընթացքում Նելլի Հրաչի Մելքոնյանի աշխատանքային պարտականությունների կատարումը վերապահել նույն կազմակերպության դաստիարակ Լիանա Հովհաննեսի Սիմոնյանին:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Նելլի Հրաչի Մելքոնյանին և Լիանա Հովհաննեսի Սիմոնյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

22.12.2023

Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

<< 22 >> դեկտեմբերի 2023 թվականի N 3239 -Ա

ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՓՈՐՁԱԳԵՏ ՎԱՐԴԱՆ ՄԱԿԵԴՈՆԻ ԱԼԹՈՒՆՅԱՆԻ ՀԵՏ ԿՆՔՎԱԾ ԺԱՄԿԵՏԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և հիմք ընդունելով Վարդան Մակեդոնի Ալթունյանի 2023 թվականի դեկտեմբերի 18-ի դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Գյումրի համայնքի նեդրումային ծրագրերի փորձագետ Վարդան Մակեդոնի Ալթունյանի հետ կնքված ժամկետային աշխատանքային պայմանագրի գործողության ժամկետը երկարաձգել մինչև 2024 թվականի հուլիսի 1-ը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Վարդան Մակեդոնի Ալթունյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

X _____ Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

<< 22 >> դեկտեմբերի 2023 թվականի N 3238 -Ա

<<ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐ>> ԵՎ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՍՈՒԲՎԵՆՑԻՈՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՓՈՐՁԱԳԵՏ ԱՇՈՏ ԲԵԺԱՆԻ ԳԱԼՍՏՅԱՆԻ ԺԱՄԿԵՏԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և հիմք ընդունելով Աշոտ Բեժանի Գալստյանի 2023 թվականի դեկտեմբերի 18-ի դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. << Գյումրու քաղաքային ճանապարհներ >> և Գյումրի համայնքի մասնակցությամբ իրականացվող սուբվենցիոն ծրագրերի փորձագետ Աշոտ Բեժանի Գալստյանի հետ կնքված ժամկետային աշխատանքային պայմանագրի գործողության ժամկետը երկարաձգել մինչև 2024 թվականի հուլիսի 1-ը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Աշոտ Բեժանի Գալստյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

22.12.2023

Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

<< 22 >> դեկտեմբերի 2023 թվականի N 3237 -Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՀԱՎԱՔԱԳՐՄԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏԻ ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐԱՊԵՍ ՆՈՒՅՆ ԲԱԺՆԻ ՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ ՌՈՒԴԻԿ ՖԵԼԻՔՍԻ ԻՍՐԱՅԵԼՅԱՆԻՆ ՎԵՐԱՊԱՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի բյուջեի եկամուտների հավաքագրման բաժնի պետի ծառայողական պարտականությունների կատարումը ժամանակավորապես վերապահել նույն բաժնի պետի տեղակալ Ռուդիկ Ֆելիքսի Իսրայելյանին՝ 2023 թվականի դեկտեմբերի 25-ից:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ռուդիկ Ֆելիքսի Իսրայելյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

22.12.2023

Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«22» դեկտեմբերի 2023 թվականի N 3236-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 16-Ի N 2877-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 27 -Ի N 1876-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2023 թվականի հուլիսի 27-ի <<Քաղաքացի Միսակ Սերյոժայի Մարտիրոսյանին սեփականության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Մյասնիկյան փողոց N 175 հասցեի տան հողամասում ինքնակամ կառուցված 42,08 քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի շինությունները, ինքնակամ բացված 1(մեկ) դուռը օրինական ճանաչելու և օրինական հողամասին կից ավել օգտագործվող 6,7 քառակուսի մետր մակերեսով հողամասի և նրա վրա առկա շինության կարգավիճակի մասին>> N 1876-Ա որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն է առաջացել, չափագրության մեջ տեղ գտած սխալի պատճառով (հիմք՝ Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի, գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին 23/11/2023 թվականի N Կ-23112023-08-0187 որոշում): Ներկայացվել է նոր ճշտգրտված չափագրություն:

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 3-րդ մասով, 36-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 34-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2023 թվականի հուլիսի 27-ի <<Քաղաքացի Միսակ Սերյոժայի Մարտիրոսյանին սեփականության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Մյասնիկյան փողոց N 175 հասցեի տան հողամասում ինքնակամ կառուցված 42,08 քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի շինությունները, ինքնակամ բացված 1(մեկ) դուռը օրինական ճանաչելու և օրինական հողամասին կից ավել օգտագործվող 6,7 քառակուսի մետր մակերեսով հողամասի և նրա վրա առկա շինության կարգավիճակի մասին>> N 1876-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները՝
   1) վերնագրում, նախաբանում,որոշման 2-րդ կետում <<դուռը>> բառից հետո լրացնել <<ինքնակամ փակված 1 (մեկ) պատուհան>> թիվը և բառերը.
   2) վերնագրում,նախաբանում,որոշման 2-րդ կետում <<42,08 (քառասուներկու ամբողջ ութ հարյուրերորդական)>> թիվը և բառերը փոխարինել <<43,43 (քառասուներեք ամբողջ քառասուներեք հարյուրերորդական)>> թվով և բառերով.
   3) որոշման 2-րդ կետում <<շինությունները>> բառից հետո լրացնել <<և 2001 թվականի մայիսի 15-ից հետո կառուցված 1,35 (մեկ ամբողջ երեսունհինգ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հարթակը և ծածկը>> թիվը և բառերը.

4) որոշման 2-րդ կետում <<2725 (երկու հազար յոթ հարյուր քսանհինգ)>> թիվը և բառերը փոխարինել <<12808 (տասներկու հազար ութ հարյուր ութ)>> թվով և բառերով.

5) նախաբանում <<ծածկագրերը>> բառից առաջ լրացնել <<2023V4QEL6>> թվերը և տառերը:

2. Գյումրի համայնքի ղեկավարի 2023 թվականի նոյեմբերի 16-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2023 թվականի հուլիսի 27-ի N 1876-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին>> N 2877-Ա որոշումը ճանաչել ուժը կորցրած:

22.12.2023

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

ք.Գյումրի
2023 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«22» դեկտեմբերի 2023 թվականի N 3235Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԲՈՒԼՎԱՐԱՅԻՆ ՓՈՂՈՑԻ 49/2 ՀԱՍՑԵԻ 15,06 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՀԱՐԹԱԿԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ, 637,0 ; 7,92 և 7,92 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՆԵՐՈՎ ՎԱՐՉԱԿԱՆ ՄԱՍՆԱՇԵՆՔԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գյումրի քաղաքի Բուլվարային փողոցի № 49/2 հասցեի շինությունները սեփականության իրավունքով պատկանում է քաղաքացի Մարիամ Հարությունի Ասատրյանին (հիմք՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի վճիռ՝ 10 նոյեմբերի 2020թվական գործ № ՇԴ/2555/02/20):

Քաղաքացի Մարիամ Հարությունի Ասատրյանը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին Գյումրի քաղաքի Բուլվարային փողոց 49/2 հասցեի 15,06 (տասնհինգ ամբողջ վեց հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հարթակի; 637,0 (վեց հարյուր երեսունյոթ); 7,92 (յոթ ամբողջ իննսուներկու հարյուրերորդական); 7,92 (յոթ ամբողջ իննսուներկու հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսներով վարչական մասնաշենքերի նպատակային նշանակությունները արտադրականի, իսկ 637,0 (վեց հարյուր երեսունյոթ); 7,92 (յոթ ամբողջ իննսուներկու հարյուրերորդական); 7,92 (յոթ ամբողջ իննսուներկու հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսներով վարչական մասնաշենքերի գործառական նշանակությունները, որպես արտադրամաս փոփոխելու խնդրանքով:

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 23-րդ հոդվածի 6-րդ մասով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2002թ. փետրվարի 2-ի թիվ 88 որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետությունում շենքերի, շինությունների կամ դրանց մի հատվածի գործառական նշանակությունը փոփոխելու կարգի» և հիմք ընդունելով քաղաքացի Մարիամ Հարությունի Ասատրյանի դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 2023 թվականի նոյեմբերի 11-ին N 25403 թվագրմամբ).

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Փոփոխել Գյումրի քաղաքի Բուլվարային փողոց 49/2 հասցեի 15,06 (տասնհինգ ամբողջ վեց հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հարթակի; 637,0 (վեց հարյուր երեսունյոթ); 7,92 (յոթ ամբողջ իննսուներկու հարյուրերորդական); 7,92 (յոթ ամբողջ իննսուներկու հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսներով վարչական մասնաշենքերի նպատակային նշանակությունները արտադրական, իսկ 637,0 (վեց հարյուր երեսունյոթ); 7,92 (յոթ ամբողջ իննսուներկու հարյուրերորդական); 7,92 (յոթ ամբողջ իննսուներկու հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսներով վարչական մասնաշենքերի գործառական նշանակությունները, որպես արտադրամաս :
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում իրավական ակտի ընդունման մասին Մարիամ Հարությունի Ասատրյանին պատշաճ կարգով իրազեկման օրվան հաջորդող օրվանից:
3. Գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

22.12.2023

ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ**

2023թ. ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«22» դեկտեմբերի 2023 **թվականի** N3234-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 28 -Ի N 2417-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2023 թվականի սեպտեմբերի 28-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Օզանյան փողոցի հարևանությամբ ինքնակամ զբաղեցրած 257.1 քառակուսի մետր մակերեսով համայնքապատկան հողամասում ինքնակամ կառուցված 257.1 քառակուսի մետր արտաքին (211.89 քառակուսի մետր ներքին) մակերեսով ավտոտնակը համայնքային սեփականություն համարելու և օրինական ճանաչելու մասին>> N 2417-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու անհրաժեշտություն է առաջացել, որոշման մեջ տեղ գտած սխալի պատճառով (հիմք՝ Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի, գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին 14/11/2023 թվականի N Կ-14112023-08-0179 որոշում):

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 3-րդ մասով և 34-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով, 36-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2023 թվականի սեպտեմբերի 28-ի << Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Օզանյան փողոցի հարևանությամբ ինքնակամ զբաղեցրած 257.1 քառակուսի մետր մակերեսով համայնքապատկան հողամասում ինքնակամ կառուցված 257.1 քառակուսի մետր արտաքին (211.89 քառակուսի մետր ներքին) մակերեսով ավտոտնակը համայնքային սեփականություն համարելու և օրինական ճանաչելու մասին>> N 2417-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝

   1) վերնագրում, նախաբանում, որոշման 1-ին կետում <<257.1 (երկու հարյուր հիսունյոթ ամբողջ մեկ տասնորդական)>> թիվը և բառերը փոխարինել <<252.83(երկու հարյուր հիսուներկու ամբողջ ութսուներեք հարյուրերորդական)>> թվով և բառերով:
   2) վերնագրում, նախաբանում, որոշման 1-ին կետում <<211.89 (երկու հարյուր տասնմեկ ամբողջ ութսունինը հարյուրերորական)>> թիվը և բառերը փոխարինել <<210.97(երկու հարյուր տասն ամբողջ իննսունյոթ հարյուրերորդական)>> թվով և բառերով:
   3) նախաբանում <<2023LDWYTL>> թիվը և տառերը փոխարինել <<2023JL7CJM, >> թվերով և տառերով:
   4) ՈՒԺը կորցրած ճանաչել 2023 թվականի հոկտեմբերի 12-ի N 2544-Ա որոշումը

22.12.2023

Հ. Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«22» դեկտեմբերի 2023 թվականի №3233-Ա

ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՔԱՂԱՔԱՑԻ ԼՈՒՍՅԱ ԱՂԱՆԻԿՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՆԴՐԱՆԻԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ ՓՈՂՈՑ, 1Բ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆ ՀԱՍՑԵԱԳՐՈՒԹՅԱՄԲ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով և հիմք ընդունելով քաղաքացի Լուսյա Աղանիկյանի դիմումը (համայնքապետարանում մուտքագրված №25913 թվագրմամբ)՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

Ժառանգության իրավունքով քաղաքացի Լուսյա Աղանիկյանին պատկանող Անդրանիկ Խաչատրյան փողոց, 1բ բնակելի տուն հասցեագրությամբ անշարժ գույքը վերահասցեավորել՝

ՀՀ Շիրակի մարզ, Գյումրի ք., Անդրանիկ Խաչատրյան փողոց, 1/2 բնակելի տուն

Недействительная подпись

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2023 թ. ք. Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«22» դեկտեմբերի 2023 **թվականի** N 3232-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԵՍԱՅԱՆ ՓՈՂՈՑ N 73 ՀԱՍՑԵԻ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՈՒ ԳՈՐԾԱՌԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գյումրի քաղաքի Եսայան փողոց N 73 հասցեի բնակելի տունը ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանում է քաղաքացիներ Կարեն Աշոտի Հայրապետյանին և Անժելա Անուշավանի Ծառուկյանին (հիմք անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 09122019-08-0006 վկայական):

Քաղաքացի Կարեն Աշոտի Հայրապետյանը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով իրեն և Անժելա Անուշավանի Ծառուկյանին պատկանող Գյումրի քաղաքի Եսայան փողոց N 73 հասցեի 104,6 (մեկ հարյուր չորս ամբողջ վեց տասնորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը բնակավայրերի բնակելի կառուցապատումից բնակավայրերի հասարակական կառուցապատում փոփոխելու և 85,08 (ութսունհինգ ամբողջ ութ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով բնակելի տան նպատակային նշանակությունը բնակելիից հասարակականի, գործառական նշանակությունը՝ որպես ստոմատոլոգիա փոփոխելու խնդրանքով:

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 23-րդ հոդվածի 6-րդ մասով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշման 24-րդ կետի 3-րդ ենթակետի, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2002թ. փետրվարի 2-ի թիվ 88 որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետությունում շենքերի, շինությունների կամ դրանց մի հատվածի գործառական նշանակությունը փոփոխելու կարգի» և հիմք ընդունելով քաղաքացի Կարեն Աշոտի Հայրապետյանի դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 2023 թվականի նոյեմբերի 14 -ին N 24496 թվագրմամբ).

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Քաղաքացիներ Կարեն Աշոտի Հայրապետյանին և Անժելա Անուշավանի Ծառուկյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Եսայան փողոց N 73 հասցեի 104,6 (մեկ հարյուր չորս ամբողջ վեց տասնորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատում գործառնական նշանակությունից փոփոխել բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատում գործառնական նշանակության:
2. Փոփոխել Գյումրի քաղաքի Եսայան փողոց N 73 հասցեի 85,08 (ութսունհինգ ամբողջ ութ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով բնակելի տան նպատակային նշանակությունը բնակելիից հասարակականի,իսկ գործառական նշանակությունները,որպես ստոմատոլոգիա:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում իրավական ակտի ընդունման մասին Կարեն Աշոտի Հայրապետյանին և Անժելա Անուշավանի Ծառուկյանին պատշաճ կարգով իրազեկման օրվան հաջորդող օրվանից:
4. Գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

22.12.2023

ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ**

2023թ. դեկտեմբերի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«22» դեկտեմբերի 2023 թվականի N3231-Ա

ՔԱՂԱՔԱՑԻ ԱՐՄԱՆ ԳԵՎՈՐԳԻ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ Մ.ՄԿՐՏՉՅԱՆ ՓՈՂՈՑ 53 ՇԵՆՔ 5-6 ԲՆԱԿԱՐԱՆԻ ՀԱՄԱՍԵՓԱԿԱՆԱՏԵՐ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԻՐ ԱՆՉԱՓԱՀԱՍ ԵՐԵԽԱՅԻ՝ ԱՐՍԵՆ ԱՐՄԱՆԻ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ՄԱՍՆԱԲԱԺԻՆԸ ԳՐԱՎԱԴՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2023 թվականի դեկտեմբերի 14-ին Գյումրի համայնքի խնամակալության և հոգաբարձության մարմնին է դիմել քաղաքացի Արման Գևորգի Գրիգորյանը (անձնագիր՝ AS0548312, տրված՝ 19.03.2019 թվականին 016-ի կողմից) խնդրելով տալ համաձայնություն գրավադրելու իր անչափահաս երեխայի՝ 22.04.2006 թվականին ծնված Արսեն Արմանի Գրիգորյանի (ծննդյան վկայական՝ ԱԲ №521484)՝ Գյումրի քաղաքի Մ.Մկրտչյան փողոց 53 շենք 5-6 բնակարանի մասնաբաժինը:

Վերոնշյալ հասցեի բնակարանի համասեփականատեր է հանդիսանում նաև անչափահաս՝ Արսեն Արմանի Գրիգորյանը (հիմք՝ 08.12.2023 թվականին գրանցված անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 08122023-08-0001):

Նիստին ներկա գտնվող երեխայի հայրը՝ Արման Գևորգի Գրիգորյանը հայտնեց, որ բնակարանի գրավադրումը նպաստելու է հետագայում բիզնեսի զարգացմանը:

Նիստին ներկա գտնվող երեխայի մայրը՝ Արմինե Անուշավանի Մկոյանը աշխատում է «Սվետ-Տեքս» ՍՊԸ–ում որպես օպերատոր: Արմինե Անուշավանի Մկոյանի աշխատավարձը ըստ Աշխատանքային պայմանագրին կից Համաձայնագիր 2-ի կազմում է 164000 /Մեկ հարյուր վաթսունչորս հազար/ ՀՀ դրամ (հարկերը ներառյալ) (հիմք՝ տեղեկանք տրված՝ 14.12.2023 թվականին «Սվետ-Տեքս» ՍՊԸ-ի կողմից):

Նիստին ներկա գտնվող անչափահաս՝ Արսեն Արմանի Գրիգորյանը տվել է համաձայնություն իր մասնաբաժինը գրավադրելու վերաբերյալ:

